ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019Թ.
№ 22 (512)
www.syuniacyerkir.am

Մեր լեզուն ծուխն է մեր տան,
Մեր կշիռն աշխարհի մեջ,
Նա աղն է մեր ինքնության,
Էության խորհուրդը մեծ:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ



Զանգեզուրի ՊՄԿ-ի թափոնաջրերի խողովակի վնասման եւ Ողջի գետի աղտոտման դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել

2019թվականի հոկտեմբերի 28-ին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ խողովակաշարի վնասման եւ թափոնաջրերով Ողջի գետի աղտոտման դեպքի առթիվ Սյունիքի մարզի դատախազությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 284-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով (Վտանգավոր քիմիական եւ կենսաբանական նյութերի ու թափոնների հետ վարվելու անվտանգության կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է շրջակա միջավայրի աղտոտում):

Մարզի դատախազի հանձնարարությամբ ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնում նա- էջ 2

Մեկ տարի առաջ Կապան համայնքի ղեկավար ընտրվեց Գեւորգ Փարսյանը

Պաշտոնավարման տարեդարձի կապակցությամբ «Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Գեւորգ Փարսյանը

2018 թ. հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Կապան բազմաբնակավայր համայնքի ղեկավարի ընտրություն, որի արդյունքում համայնքի ղեկավար ընտրվեց Գեւորգ Փարսյանը:

Մեկ տարի է անցել այդ ժամանակվանից:

Մեկ տարվա ընթացքում համայնքային իշխանության նախաձեռնությամբ բազմաթիվ հարցեր լուծվեցին Կապանում:

Մեկ տարվա ընթացքում, կարելի է ասել, համայնքապետի նոր ընկալում ձեւավորվեց ոչ միայն Կապանում, այլեւ մարզում:

Եվ այդ ամենի շնորհիվ Գեւորգ Փարսյանը շարունակում է ունենալ բարձր վարկանիշ, վայելել համայնքի ընտրողների վստահությունն այնպես, ինչպես մեկ տարի առաջ:

Մարզկենտրոնի իրականությունն ու հանրային տրամադրությունները ցույց են տալիս, որ Գեւորգ Փարսյանը բոլոր կապանցիների համայնքապետն է՝ անկախ կուսակցական, թիմային պատկանելությունից, անկախ հանրության մեջ զբաղեցրած տեղից եւ ունեցած դերից:

Պաշտոնավարման տարեդարձի կապակցությամբ «Սյունյաց երկիրը» զրույցի հրավիրեց Գեւորգ Փարսյանին:

– Պարոն Փարսյան, Հաջողության բանաձեւը՝ ըստ Ձեզ, իսկ ավելի ճիշտ՝ համայնքապետի, պետական պաշտոնյայի հաջողության գումարելիները մեր օրերում:

– Հակիրճ պատասխանեմ հարցին՝ շատ աշխատել, քիչ խոսել կամ գոնե կատարած գործին համաչափ խոսել: Այս համատեքստում կհիշեցնեի աստվածաշնչյան ձեւակերպումը՝

մի հավատացեք մեր խոսքերին, այլ հավատացեք մեր գործերին:

– Մեկ տարի առաջ, երբ Կապանում համայնքապետ պիտի ընտրվեր, Դուք իշխող կուսակցության նախընտրելի թեկնածուն չէիք, բայց հաղթեցիք, կապանցին վստահության քվեն տվեց Ձեզ:

Հանրության մեջ մտավախություն

էջ 3

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւը օրակարգ մտցնելու հարցը

ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատում հոկտեմբերի 29-ին կայացած քվեարկության արդյունքում ձայների մեծամասնությամբ ընդունվեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւը փակ ընթացակարգով օրակարգ մտցնելու հարցը: Քվեարկությանը մասնակցած կոնգրեսականներից կողմ քվեարկեց 223, դեմ քվեարկեց 191-ը: Ըստ ընթացակարգի, բանաձեւում այլեւս փոփոխություններ չեն կարող մտցվել:

ՀՅԹԻ արտաքին կապերի եւ լրատվության բաժինն «Արմենպրես»-ին տրամադրել է բանաձեւի ոչ պաշտոնական թարգմանությունը:

«Հաստատելով Հայոց ցեղասպանության վերաբերյալ Միացյալ Նահանգների արձանագրությունները» (Affirming the United States record on the Armenian Genocide) վերնագիրը կրող փաստաթղթում ասված է.

«Քանի որ Միացյալ Նահանգները կարող է հպարտանալ 1915 - 1923 թթ. Օսմանյան կայսրության կողմից 1,5 միլիոն հայերի սպանությունը՝ Հայոց ցեղասպանությունը, ճանաչելու եւ դատապարտելու, ինչպես նաեւ հայերին, հույներին, ասորիներին, քաղդեացիներին, սիրիացիներին, արամեացիներին, մարոնիտներին եւ ցեղասպանությունը վերապրած այլ քրիստոնյաներին փրկություն ցուցաբերելու իր պատմական անցյալի համար,

Քանի որ 1913-1916 թթ. Օսմանյան կայսրությունում Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուն կազմակերպել եւ առաջնորդել է բազմաթիվ երկրների պաշտոնատար անձանց բողոքի գործողություններն ընդդեմ այն, ինչը նա բնութագրել է որպես կայսրության կողմից «ազգի ոչնչացմանն ուղղված արշավ», եւ 1915 թ. հուլիսի 16-ին Միացյալ Նահանգների պետքարտուղար Ռոբերտ Լանսինգի կողմից նա հրահանգ է ստացել, որ «Պետքարտուղարությունը հավանություն է տալիս հայկական հետապնդումների դադարեցմանն ուղղված ...ձեր գործողություններին»,

Քանի որ նախագահ Վուդրո Վիլսոնը խրախուսել է «Մերձավոր Արեւելքի նպաստամատույց» կազմակերպության ձեւավորումը, որը հաստատվել է Կոնգրեսի ակտով եւ որը 1915-1930 թթ. ընթացքում հավաքել է 116,000,000 դոլար (2019 թ. արժեքով՝ ավելի քան 2,500,000,000 ԱՄՆ դոլար) եւ Սենատն ընդունել է այս կոտորածները դատապարտող բանաձեւեր,

Քանի որ Ռաֆայել Լեմկինը, ով 1944 թ. սահմանեց «ցեղասպանություն» եզրույթը եւ որը կանգնած էր ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին» կոնվենցիայի ակունքներում, հայկական դեպքը վկայակոչում էր որպես 20-րդ դարի ցեղասպանության ակնառու օրինակ,

Քանի որ, ինչպես ներկայացված է Միացյալ Նահանգների Հոլոքոստի թանգարանում, Ադոլֆ Հիտլերը 1939 թ. իր հրամանատարներին առանց որեւէ դրդապատճառի Լեհաստանի վրա հարձակումը հրահանգելու ժամանակ ի չիք դարձրեց բոլոր առարկություններն՝

էջ 2

Գեղանկարիչ Բաբկեն Գեւորգյանի առաջին անհատականը

Կապանի համայնքապետարանի արվեստի թանգարանում բացվեց շնորհալի արվեստագետ Բաբկեն Գեւորգյանի գեղանկարչական աշխատանքների ցուցանահանդեսը:

Սովորել է Կապանի թիվ 3 դպրոցում: Գեղանկարչական նախնական կրթությունը ստացել է Ռոբերտ Կամոյանի արվեստանոցում: 2008-ին ընդունվել է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան: 2008-2010 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2014 թ. ավարտել է ուսումնառությունը Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայում, ապրում եւ ստեղծագործում է Կապանում:

Ցուցադրանքում 35-ից ավելի կտավներ էին, որոնք որոշակի պատկերացում են տալիս երիտասարդ արվեստագետի նախասիրությունների եւ ստեղծագործական ուղղվածության մասին: Առաջին անհատական ցուցահանդեսն էր 27-ամյա արվեստագետի, որ, ասես, հասունության քննություն լիներ արվեստասերների առջեւ, եւ կարելի է ասել, որ վերջիններս տպավորված էին գեղանկարչի ստեղծագործություններով:

Ցուցահանդեսի բացման խոսքում թանգարանի տնօրեն Բորիկ Մինասյանը փաստեց, որ երիտասարդ գեղանկարիչը մտել է արվեստի դաշտ եւ աշխատասերու հետեւողական լինելու դեպքում հաջողությունները երկար սպասել չեն տա:

Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանն ուրախալի համարեց փաստը, որ կապանցի անվանի գեղանկարիչների կողքին նոր անուններ են հայտնվում՝ նշելով, որ արվեստի մեջ կարեւորը ձեւի եւ բովանդակության ներդաշնակությունն է, որն առկա է երիտասարդ գեղանկարչի կտավներում:

Բաբկեն Գեւորգյանը նշեց, որ յուրաքանչյուր գեղանկարիչ, նախեւառաջ, ներկայացնում է իր մտավոր աշխարհը, այն ամենը, ինչ իր մեջ կա, որն ի վերջո դառնում է հասարակության սեփականությունը, բոլորի հարստությունը. *«Գեղանկարի միջոցով պարզապես իմ մտքերն եմ շարադրում»,* – ասաց գեղանկարիչը:

Ի դեպ, Կապանի Ռոմանոս Մելիքյան 8 հասցեում արդեն երեք տասնամյակ գործում էր Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղը, որ այժմ Կապանի համայնքապետարանի ենթակայության ներքո է՝ «Կապանի արվեստի թանգարան» համայնքային ոչ առեւտրային կազմակերպություն (ՀՈԱԿ) կարգավիճակով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւը օրակարգ մտցնելու հարցը

էջ 1

ասելով. «Ի վերջո, ո՞վ է այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»՝ հիմք դնելով հրեաների Ողջակիզման համար,

Քանի որ Միացյալ Նահանգները պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը՝ 1951 թ. մայիսի 28-ին Միացյալ Նահանգների Կառավարության կողմից «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին» կոնվենցիայի վերաբերյալ Արդարադատության միջազգային դատարան ուղարկված գրավոր հայտարարության, նախագահ Ռոնալդ Ռեյգանի՝ 1981 թ. ապրիլի 22-ի №4838 հայտարարության եւ ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատների՝ 1975 թ. ապրիլի 8-ի №148 եւ 1984 թ. սեպտեմբերի 10-ի №247 համատեղ բանաձեւերի միջոցով,

Քանի որ «Էլի Վիզելի Ցեղասպանության եւ վայրագությունների կանխարգելման մասին» 2018 թ. օրենքով վայրագությունների կանխարգելումը սահմանվում է որպես Միացյալ Նահանգների ազգային շահ, ինչպես նաեւ հաստատվում է, որ Միացյալ Նահանգների քաղաքականությունն է Միացյալ Նահանգների կառավարության մակարդակով իրականացնել ռազմավարություն, որն ուղղված է հնարավոր վայրագությունների բացահայտմանը, կանխմանն ու արձագանքմանը՝ «դիվանագիտական արձագանքի եւ արտաքին օգնության արդյունավետ օգտագործումն ուժեղացնելու միջոցով՝ համապատասխան անցումային արդարադատության միջոցառումներին աջակցելու, ներառյալ նախկին ոճրագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով»:

Արձանագրելով վերոնշյալը՝ հաստատում ենք, որ Ներկայացուցիչների պալատի կարծիքով Միացյալ Նահանգների քաղաքականությունն է՝

1) ոգեկոչել Հայոց ցեղասպանությունը՝ այն պաշտոնապես ճանաչելու եւ հիշատակելու միջոցով,

2) մերժել Միացյալ Նահանգների կառավարությանը՝ Հայոց ցեղասպանության կամ որեւէ այլ ցեղասպանության ժխտման մեջ ներգրավելու, ներառելու կամ որեւէ այլ կերպ առնչելու փորձերը, եւ

3) խրախուսել Հայոց ցեղասպանության փաստերի՝ ներառյալ մարդասիրական օգնության գործում Միացյալ Նահանգների դերի եւ մարդկության դեմ ներկայումս իրականացվող հանցագործությունների ու Հայոց ցեղասպանության միջեւ առնչությունների վերաբերյալ կրթությունը եւ հանրային իրազեկվածությունը»:

Բանաձեւի անգլերեն բնագրից (ոչ պաշտոնական) թարգմանությունը՝ ՀՑԹԻ ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Ռոբերտ Թաթոյանի

Զանգեզուրի պղնձամոլիբդենային. Մաքսիմ Հակոբյանի ու նրա որդու փոխարեն նոր բաժնետերեր Ժնեւից եւ Աջափնյակից

Հայաստանում ամենախոշոր ձեռնարկության՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ԶՊՄԿ) բաժնետերերն ընկերության մասնավորեցումից հետո փոփոխվել են: ԶՊՄԿ-ում խոշոր մասնակցություն ունեցող բաժնետեր Մաքսիմ Հակոբյանի ընտանիքը 2017-ին ամբողջությամբ վաճառեց իր բաժնեմասերը մի ընկերության, որի սեփականատերերը կապվում են Սուրբ Աթոռում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանի շրջապատի հետ: Հեղափոխությունից հետո կոմբինատում դարձյալ բաժնետեր է փոխվել:

Պղնձամոլիբդենայինի մասնավորեցումը. Cronimet vs Comsup

2004-ին Հայաստանի կառավարությունը մասնավորեցրեց պետական խոշոր ձեռնարկություններից մեկը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը: Այդ որոշմամբ՝ Հայաստանի արդյունաբերական հսկայի բաժնետոմսերի 60 տոկոսն օտարվեց գերմանական «Քրոնիմետ» (Cronimet) ընկերությանը, 15 տոկոսը՝ «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ին, 12,5-ական տոկոս բաժնեմասեր էլ օտարվեցին «Զանգեզուր մայնինգ» ՍՊ եւ «Արմենիան մոլիբդենիում փրոդաքշն» ՍՊ ընկերություններին: Այս ընթացքում կոմբինատում տեղի են ունեցել բաժնետերերի խոշոր փոփոխություններ:

Մինչ կոմբինատի մասնավորեցումը՝ 2004-ի մարտի 11-ին կառավարությունը ստեղծել էր միջգերատեսչական հանձնաժողով, որը պետք է նախապատրաստեր մասնավորեցման գործընթացը, հետագայում ներդրումային մրցույթ կազմակերպեր եւ այլն:

Պետական գույքի կառավարման կոմիտեից SիվիլՆեթին պատասխանել են, որ ԶՊՄԿ-ն ընդգրկված է եղել «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թթ. ծրագրի մասին» ՀՀ օրենքում ընդգրկված մասնավորեցման ենթակա ընկերությունների ցանկում: Միեւնույն ժամանակ՝ Կոմիտեից հայտնել են, որ «ներդրումային մրցույթին ներկայացված հայտերի վերաբերյալ փաստաթղթերը պետգույքի կառավարման վարչության սկավառակում առկա չեն»:

ԶՊՄԿ-ի բաժնեմասերը ձեռք բերելու համար ներկայացվել է երկու հայտ՝ գերմանական «Քրոնիմետ» եւ ամերիկյան «Քոմսափ» (Comsup) ընկերությունների կողմից: Գերմանական ընկերությունն առաջարկել է 132 միլիոն դոլար՝ բաժնետոմսերը գնելու համար ու պատրաստ է եղել գնել բաժնետոմսերի 50-100 տոկոսը: Ամերիկյան «Քոմսափն» առաջարկել է 130 միլիոն դոլար ու, ըստ պետգույքի կառավարման կոմիտեի, ներդրումային ծրագրից պարզ է, որ հիմնական ուշադրությունը կենտրոնացված է եղել հանքաքարի

էջ 4

Զանգեզուրի ՊՄԿ-ի թափոնաջրերի խողովակի վնասման եւ Ողջի գետի աղտոտման դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել

էջ 1

խապատրաստված նյութերով պարզվել է, որ «ԶՊՄԿ» ՓԲԸ համապատասխան աշխատակիցների կողմից արտադրված թափոնների տեղափոխման կանոններն առերեւույթ խախտելու հետեւանքով Սյունիքի մարզի Ներքին Գիրաթաղ գյուղի տարածքով անցնող՝ նշված ընկերության թիվ 2-րդ դյուկերի տարածքում վնասվել է 1020մմ տրամագծով 31-րդ խողովակաշարը: Դրա հետեւանքով խողովակաշարով անցնող թափոնաջրերը, լցվելով նշված տարածքով հոսող վտակը, թափվել են Ողջի գետ՝ անզգուշությամբ աղտոտելով շրջակա միջավայրը:

Քրեական գործի նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչությանը: Նախաքննության շրջանակներում կպարզվեն ինչպես դեպքի լիարժեք հանգամանքներն ու պատճառները, այնպես էլ շրջակա միջավայրին պատճառված վնասի ամբողջական եւ վերջնական չափերը:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ դատախազություն

Մեկ տարի առաջ Կապան համայնքի ղեկավար ընտրվեց Գեւորգ Փարսյանը

Պաշտոնավարման տարեդարձի կապակցությամբ «Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Գեւորգ Փարսյանը

էջ 1

կար, որ իշխող կուսակցության քաղաքականության հետ Ձեր ինտեգրումը կամ համայնքապետարանի ներդաշնակ աշխատանքի ապահովումը դյուրին չեն լինելու:

Մինչդեռ՝ ժամանակը ցույց տվեց, որ իշխող թիմի անդամ չլինելն ամենեւին էլ խոչընդոտ չէ համայնքապետի գործառույթները պատշաճ կատարելու համար:

Կուզենայինք այդ առումով Ձեր դիտարկումն իմանալ:

– Իսկապես, մեկ տարվա ընթացքում չեմ զգացել այդպիսի տարբերություն, իշխանության թիմն եմ ներկայացնում, թե՞ ընդդիմության, քանի որ զբաղված ենք եղել միմիայն աշխատանքով, բայց այն կարծիքն ունեմ նաեւ, որ իշխանության թեւը ներկայացնելիս որոշ դռներ ավելի հեշտությամբ կբացվեին իմ առջեւ: Սա քննարկման ենթակա չէ նույնիսկ: Թեպետ նորից կրկնեմ՝ պաշտոնավարման մեկ տարվա ընթացքում առանձնապես խոչընդոտներ ոչ զգացել եմ, ոչ առավել եւս՝ հաղթահարել:

– Օգոստոսի 17-ին՝ Կապան քաղաքի օրվա կապակցությամբ ունեցած ելույթներից մեկում, Դուք կես-կատակ, կես-լուրջ, բայց յուրօրինակ գնահատական տվեցիք Հայաստանում 2018 թ. գարնանը տեղի ունեցած հեղափոխություն-իշխանափոխությանը, որն անմիջապես տարբեր մեկնաբանությունների տեղիք տվեց:

Ինչ ասել էր՝ «Ոմանք ասում են, թե հեղափոխությունը Կապան չի հասել, բայց արդյոք կապանցին հեղափոխվելու կարիք ունի, կարծում եմ՝ ոչ, քանզի նա միշտ առանձնացել է իր ինտելեկտով, ժայռի պես ամուր կամքով, իր սկզբունքներին հավատարիմ՝ անփոփոխ արժեքներով ու կայուն արժեհամակարգով եւ ամենակարեւորը՝ բարեպաշտ ավանդական ընտանիքով»:

– Ինչպես տեսնում եք՝ փառաբանում եմ կապանցիներին, եւ այն կարծիքն ունեմ, որ կապանցիներն այդ արժեհամակարգը դավանում են, ու եթե խոսում ենք, թե հեղափոխությունն այս-այս խնդիրները պիտի լուծի, կապանցին այդ հարցերը լուծելու խնդիր չունի: Ինձ քաղաքականությունը հետաքրքիր չէ, քաղաքականությամբ չեմ զբաղվում, ձգտում եմ ընդհանրապես չմտնել այդ դաշտ: Ասածներիս մեջ պետք չէ քաղաքական ենթատեքստ փնտրել: Իմ միտքը հստակ շարադրված է, եւ դա ճիշտ է արտացոլում կապանցու հոգեկերտվածքը: Պարզապես մեր քաղաքի օրն էր, եւ փորձել եմ բնութագրել իմ համաքաղաքացուն: Այդ ամենը յուրաքանչյուր առիթով եւ ամեն մի միջավայրում կարող եմ կրկնել...

– Եվ քանի որ անդրադարձանք օգոստոսի 17-ին անցկացված համաքաղաքային տոնախմբությանը, մի հարց եւս՝ քաղաքի օրվան առնչվող:

Ուշագրավ (մեր կարծիքով՝ գնահատելի) կարգախոս էիք ընտրել այդ օրը՝ «Ամուր ընտանիք, ծաղկուն Կապան»:

Հատկապես մեր օրերում, երբ ազգային-ավանդական որոշ արժեքներ փորձության են ենթարկվում, դա պահանջված կարգախոս էր, ավելին՝ Կապանի բարգավաճումն ամուր ընտանիքով պայմանավորող բանաձեւ:

Ճի՞շտ է մեր նկատառումը:

– Հայ ժողովուրդը հին ժամանակներից ի վեր հայտնի է եղել իր ավանդական, ամուր ընտանիքով:

Հայ դասականն էլ դա դիպուկ է ձեւակերպել՝ զորավոր է այն ազգը, որ ունի զորավոր ընտանիքներ: Միշտ պիտի քարոզենք ամուր ընտանիք ունենալու գաղափարը, որ այդ ընտանիքներում միշտ իշխեն համերաշխությունը, փոխհամաձայնությունը, փոխադարձ հարգանքը: Ամուր, առողջ, կայացած ընտանիքի ջատագով եմ, առանց որի հասարակության առաջընթաց դժվար է ակնկալել:

– Անցած մեկ տարում Կապանում բազմաթիվ դրական փոփոխություններ տեղի ունեցան:

Դրանցից յուրաքանչյուրն առանձին խոսակցության առարկա է:

Փորձենք համառոտ ընդհանրացում կատարել. ըստ Ձեզ՝ սկզբունքային առումով, էականորեն ի՞նչ փոխվեց Կապանում:

– Հարցը ենթադրում է, որ ինքս գնահատական տամ իմ կատարածին, որը մի փոքր դժվար է... Համենայն դեպս, համայնքային իշխանության հանդեպ նկատում եմ վստահության աճ, հասարակության մեջ ամենադժվարը վստահություն ձեռք բերելն է, ինչը ոչ մի բանով չես նվաճի: Իմ աշխատասենյակ մարդիկ են գալիս տարաբնույթ հարցերով, կենցաղային տարրական հարցերից մինչեւ քաղաքաշինությանն առնչվող գլոբալ խնդիրներ, նաեւ այնպիսի հարցերով են դիմում, որ մեր լիազորությունների շրջանակից դուրս է, եւ ի՞նչ են ասում՝ մեր քաղաքը տեր ունի: Բայց դա իմ խոսքերը չեն, եւ չէի ցանկանա բարձրաձայնել: Իմ տպավորությամբ անցած մեկ տարում հանդարտություն է եկել Կապանի, կապանցիների վրա, ժպիտն ու բավարարվածության զգացումն են շատացել...

> *...Փառաբանում եմ կապանցիներին, եւ այն կարծիքն ունեմ, որ կապանցիներն այդ արժեհամակարգը դավանում են, ու եթե խոսում ենք, թե հեղափոխությունն այս-այս խնդիրները պիտի լուծի, կապանցին այդ հարցերը լուծելու խնդիր չունի:*

– Իսկ կարո՞ղ ենք Կապանի մեկ տարին ամփոփել թվերի լեզվով, խնդրեմ:

– Սկսենք հենց կոմունալ ծառայությունից: Աղբահանության վարձավճարների հավաքման 30 տոկոս աճ ենք ապահովել, Կապանի կոմունալ ծառայությանը նվիրաբերվել է յոթ տեխնիկա, որի շնորհիվ ունեցել ենք 13 միլիոն դրամի տնտեսում: Նորոգվել եւ ներկվել են մոտ 100 երկաթյա աղբաման, ձեռք է բերվել 84 նոր ցինկապատ աղբաման, քաղաքի տարբեր հատվածներում կառուցվել եւ վերակառուցվել է 70-ից ավելի աղբատեղի: Նորոգվել եւ բարեկարգվել է Կապան քաղաքով անցնող Մ-2 մայրուղուն կից 10 կանգառ՝ ուղեւորների համար ապահովելով հարմարավետություն եւ անվտանգություն: Քաղաքի տարբեր հատվածներում տնկվել է մոտ հազար ծառ: Նշանակալի գործեր են արվել նաեւ քաղաքաշինության, գյուղատնտեսության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում:

– Կա մի ոլորտ, որ հատկապես այս օրերին շրջանցել չենք կարող:

Նկատի ունենք բնապահպանությունը:

Հոկտեմբերի 17-ին Զանգեզուրի ՊՄԿ-ի թափուկատարի վթարը եւս մեկ անգամ ցույց տվեց, որ Կապանն այդ առումով շարունակում է մնալ ռիսկային գոտում:

Բնապահպանության ոլորտում Ձեր քաղաքականությունը, արդյունքները՝ անցած մեկ տարվա կտրվածքով:

Հոկտեմբերի 17-ի վթարի Ձեր գնահատականը եւ դրանից բխող անելիքները:

Կա՞մ փորձագիտական-մասնագիտական գնահատական՝ շրջակա միջավայրի վրա վթարի ունեցած ազդեցության վերաբերյալ:

– Լուրջ ուշադրություն ենք դարձնում բնապահպանական ոլորտին, բոլոր բնապահպանական ռիսկերը ձգտում ենք հասցնել նվազագույնի: Ճիշտ է, տեղական ինքնակառավարման մարմինն իր լիազորությունների շրջանակում այդ ոլորտում շատ բան չունի անելու: Իրավասու մարմինը, ասենք, բնապահպանական տեսչությունը, նման դեպքերում պիտի համապատասխան գնահատական տան, վերաբերմունք դրսեւորեն: Տեղյակ եմ՝ որոշակի գործընթացներ արդեն սկսել են: Ողջի գետի աղտոտման դեպքի հետ կապված դիմել եմ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենին, որ գետի հունը մաքրելու համար տեխնիկա տրամադրի: Նա էլ տվել է իր համաձայնությունը: Բայց քանի որ իրավական գործընթացներ են սկսվել, բնապահպանական տեսչության համաձայնությունը պիտի լինի: Գրություն ենք ուղղել բնապահպանական տեսչությանը, թե՝ արդյո՞ք գետի հունի մաքրումը չի խանգարի իրենց ուսումնասիրություններին:

– Արծվանիկի պոչամբարն օրեցօր ընդլայնվում-մեծանում է:

Ո՛չ համապատասխան նախարարությունը, ո՛չ բնապահպանական տեսչությունը, ո՛չ մարզպետարանը չեն ասում, թե ինչ է կատարվում այդ թափուկավայրում:

Գուցե Դո՞ւք պարզաբանեք՝ ի՞նչ է կատարվում Հայաստանի ամենախոշոր պոչամբարում, Կապանի եւ ազդակիր մյուս բնակավայրերի բնակիչները համաձա՞յն են պոչամբարի ծավալի վերստին ընդլայնմանը, կատարվե՞լ է դրա հնարավոր հետեւանքների նոր գնահատում-փորձաքննություն:

– Միանգամից ասեմ, որ Արծվանիկի պոչամբարի ընդլայնման մասին խոսք չի կարող լինել: Պայմանավորվածություն կա ԶՊՄԿ-ի տնօրինության հետ, որ վեց տարի հետո պոչամբարը ռեկուլտիվացիայի է ենթարկվելու, այսինքն՝ փակվելու է: Նախագծային հզորության նիշին հասնելուց հետո ընդլայնում չի լինելու: Այդտեղ տեխնիկա է աշխատում, եւ մարդկանց թվում է, թե պոչամբարն ընդլայնում են: Մինչդեռ՝ հողի բերրի շերտը (բուսահողը) հեռացնում են՝ հետագայում ռեկուլտիվացիայի ժամանակ օգտագործելու համար: Դա բնապահպանական միջոցառում է: Այն էլ ասեմ, որ այժմ ԶՊՄԿ-ն աշխատանքներ է սկսել նոր պոչամբարի տեղորոշման համար: Տարբերակներ են քննարկվում, բայց մի բան կարող եմ վստահեցնել՝ պոչամբարը Կապանի վարչական տարածքի շրջագծից դուրս է լինելու: Շատ հնարավոր է, որ նոր տեխնոլոգիաների փոփոխության հետ կապված՝ թափոնները լինեն պինդ վիճակում եւ դատարկ ապա-

էջ 6

> *Իսկապես, մեկ տարվա ընթացքում չեմ զգացել այդպիսի տարբերություն, իշխանության թիմն եմ ներկայացնում, թե՞ ընդդիմության:*

Զանգեզուրի պղնձամոլիբդենային. Մաքսիմ Հակոբյանի ու նրա որդու փոխարեն նոր բաժնեփերեր Ժնեւից եւ Աջափնյակից

էջ 2 վերամշակման վրա: Հետագայում բանակցություններ են սկսվել երկու ընկերությունների հետ, եւ կառավարությունը հավանություն է տվել «Քրոնիմետի» ներդրումային ծրագրին:

Ովքե՞ր են ԶՊՄԿ բաժնեփերերը

ԶՊՄԿ-ի ամենախոշոր բաժնետերը՝ «Քրոնիմետը», մասնավորեցումից հետո աստիճանաբար մեծացրել է իր բաժնեմասը՝ 60 տոկոսից հասցնելով 75 տոկոսի: Սա կատարվել է գերմանացիների կողմից ԶՊՄԿ-ի մեկ այլ բաժնետիրոջ՝ «Մաքուր երկաթի գործարանի» բաժնեմասերը ձեռք բերելուց հետո: «Մաքուր երկաթի գործարան» ընկերության 2014-ի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ ընկերության տնօրեն եւ խոշոր մասնակից Գենիկ Կարապետյանը եւ նրա որդին՝ Դավիթ Կարապետյանը, սեփականության իրավունքով իրենց պատկանող բաժնեմասերը վաճառել են գերմանական «Քրոնիմետ հոլդինգ» ՍՊԸ-ին, որը «Քրոնիմետ» խմբի մեջ մտնող ընկերություն է: Գործարքը կայացել է 2014-ի մայիսին:

Գենիկ Կարապետյանի բաժնեմասը ընկերությունում 38,2 տոկոս էր: 2014-ի վերջին «Մաքուր երկաթի գործարանի» երկու նշանակալից բաժնետերերը «Քրոնիմետի» հետ փոխկապակցված գերմանական երկու ընկերություններ էին՝ «Քրոնիմետ երկաթաձուլվածքների առեւտրային ընկերությունը»՝ 50,979 տոկոս բաժնեմասով եւ «Քրոնիմետ հոլդինգ» ՍՊԸ-ն՝ 44 տոկոս բաժնեմասով: «Մաքուր երկաթի գործարանի» գործադիր տնօրենը Կարեն Հակոբյանն է՝ Սյունիքի նախկին մարզպետ, ԶՊՄԿ-ի տնօրենների խորհրդի անդամ Վահե Հակոբյանի եղբայրը:

Արդեն 2015-ի սկզբին «Մաքուր երկաթի գործարանի» տնօրենների խորհուրդը հավանություն է տվել, որ «Քրոնիմետ հոլդինգ» ՍՊԸ-ն ձեռք բերի նաեւ ընկերության փոքր բաժնետերերի բաժնետոմսերը: ԶՊՄԿ-ում «Քրոնիմետ մայնինգ» ընկերության բաժնեմասերին հետագայում գումարվել են «Մաքուր երկաթի գործարանում» «Քրոնիմետ հոլդինգի» ձեռք բերած բաժնեմասերը եւ կազմել 75 տոկոս:

«Քրոնիմետ». գերմանական ներդնողը՝ Զանգեզուրում

«Քրոնիմետը» ընկերությունների խումբ է, որը զբաղվում է հանքարդյունաբերությամբ, թափոնների կառավարմամբ, մոլիբդենի, պողպատի առեւտրով: Ընկերությունը ստեղծվել է 1980-ին՝ Գերմանիայի Կարլսրուհե քաղաքում: Ներկայում «Քրոնիմետը» աշխարհի 70 կետերում զբաղվում է մետաղների արդյունահանմամբ: «Քրոնիմետի» մայր ընկերությունը Cronimet Mining GMBH-ն է, որի վերջնական բաժնետերերը հանքարդյունաբերության ոլորտի գործարար Պիլարսկիների ընտանիքն է:

Գյունտեր Պիլարսկին հիմնել է ընկերությունը, իսկ նրա ընտանիքի անդամները՝ Յուրգեն, Յոակիմ եւ Էլկե Պիլարսկիները «Քրոնիմետի» բաժնետերերն են: Գյունտեր Պիլարսկին նաեւ գերմանական «Կարլսրուհե» ֆուտբոլային ակումբի փոխնախագահն է, նաեւ՝ Գերմանիայի Բադեն-Վյուրթեմբերգ երկրամասում ՀՀ պատվո հյուպատոսը:

Մաքսիմ Հակոբյանի բաժնեմասը՝ դեպի Կիպրոս եւ Շվեյցարիայի քաղաքացի

ԶՊՄԿ-ում 12,5 տոկոս բաժնեմասունի «Զանգեզուր մայնինգ» ՍՊԸ-ն: Այս ընկերությունում եւս 2017-ին տեղի են ունեցել փոփոխություններ: 2004-ից «Զանգեզուր մայնինգի» բաժնետերերն էին Մաքսիմ Հակոբյանը, նրա եղբայրն ու Հակոբյանի հետ փոխկապակցված անձինք: Մաքսիմ Հակոբյանի բաժնեմասը «Զանգեզուր մայնինգում» 50 տոկոս էր, նրա եղբորինը՝ Մեժլում Հակոբյանինը՝ 10 տոկոս, 10-ական տոկոս բաժնեմասեր ունեին նաեւ Ալիկ Դավթյանը, Աշոտ Մարգարյանը, Արծրունի Ավետիսյանը, Արիստակես Ներսիսյանը: 2017-ի դեկտեմբերին այս բոլոր անձանց բաժնեմասերն անցել են «Մուն մեթալս» ՓԲԸ-ին: Մաքսիմ Հակոբյանը եղել է ԶՊՄԿ-ի գործադիր տնօրենը, 2014-ին, սակայն, հեռացել այդ պաշտոնից: Մամուլում եղան հրապարակումներ, որ կոմբինատի բաժնետերերը դժգոհ են Հակոբյանից, խոսվում էր նաեւ անարդյունավետ կառավարման եւ չարաշահումների մասին: Մաքսիմ Հակոբյանին այդ պաշտոնում փոխարինեց Նիլ Սթիվենսոնը: Ընկերության տնօրենը Ռոբերտ Մարգարյանն է, ով, բացի «Մուն մեթալսից», տնօրեն է դարձել նաեւ «Զանգեզուր մայնինգում»:

«Մուն մեթալս» ՓԲԸ-ի իրավաբանական հասցեն Երեւանի Արշակունյաց 5-ն է: Գնացինք այս հասցեով, շենքում տեղակայված գրասենյակներից ոչ մեկը «Մուն մեթալսինը» չէր: Պետեկամուտների կոմիտեի հարկ վճարողների համակարգում այս ընկերության գործունեությունը նշված է «այլ մանրածախ առեւտուր ոչ մասնագիտացված խանութներում» տեսակով:

ԶՊՄԿ-ի 12,5 տոկոս բաժնեմասի սեփականատեր «Մուն մեթալսը» 2017-2019 թթ. ունեցել ընդամենը 1-3 աշխատակից: Ընկերության կանոնադրական կապիտալը ավելի քան 12,3 միլիարդ դրամ է:

Այնուհանդերձ, մեր ձեռք բերած փաստաթղթի համաձայն, «Մուն մեթալսի» բաժնետերեր են եղել երկու անձինք՝ Արմեն Անտիկյանն ու Սուրեն Աձիկյանը: Արմեն Անտիկյանը Հովիկ Աբրահամյանի մշակութային հարցերով նախկին խորհրդական, Վենետիկի ժամանակակից արվեստի 54-րդ բիենալեի հայկական տաղավարի համակարգող Արմինե Անտիկյանի եղբայրն է: Մեզ հաջողվեց պարզել, որ Անտիկյանն աշխատում է «Երեւան մոլում» որպես փոխտնօրեն, Սերժ Սարգսյանի փեսա, Սուրբ Աթոռում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանի շրջապատից է: Անտիկյանը նաեւ Լեոնիդ Արեւշատյանի ազգականներից է. Արեւշատյանը Միքայել Մինասյանի բիզնեսների կառավարիչն ու «Զորագետ հիդրո» ընկերության բաժնետերերից մեկն է: [Սեպտեմբերի 16-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր ասուլիսում հայտարարել էր ռազմավարական մի շարք օբյեկտների մասնավորեցման եւ դրանցում Միքայել Մինասյանի սեփականատեր լինելու մասին՝ նշելով, որ այդ փաստերով նախաքննություն է ընթանում: Ըստ մամուլի հրապարակումների՝ խոսքը «Զորագետ հիդրո»-ի մասին է]:

2011-2016 թթ. Արեւշատյանը եղել է Միքայել Մինասյանի անվան հետ կապվող «Զորագետ հիդրո»-ի 11 տոկոսի բաժնետերը: Փորձեցինք կապ հաստատել Արմեն Անտիկյանի հետ, այցելեցինք «Երեւան մոլ», սակայն նա տեղում չէր: Ավելի ուշ հեռախոսազրույցում «Երեւան մոլից» խոստացան, որ նա կապ կհաստատի մեզ հետ, սակայն Անտիկյանի հետ զրուցել այդպես էլ չհաջողվեց:

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (ՏՄՊՊՀ) 2018-ի հուլիսի 20-ին որոշեց համակենտրոնացնել «Մուն մեթալսն» ու Կիպրոսում գրանցված «Վոլնըրթ ֆայնենս լիմիթեդ» (Walnort Finance Limited) ընկերությունները: «Վոլնըրթ ֆայնենս լիմիթեդը» ձեռք է բերել «Մուն մեթալսի» բաժնետոմսերը: Ըստ ՏՄՊՊՀ որոշման՝ համակետրոնացման նպատակն է հանքարդյունաբերության ոլորտում ֆինանսավորման ակտիվացումը եւ տարբեր ֆինանսական գործիքների միջոցով ներդրումների իրականացումը:

Կիպրոսի ընկերությունների ռեգիստրից ՍիվիլՆեթը ձեռք է բերել այս ընկերության վերաբերյալ տեղեկություններ: «Վոլնըրթ ֆայնենս լիմիթեդը» ստեղծվել է 2013-ին: Ընկերությունն իր պատմության ընթացքում ունեցել է երեք տնօրեն, վերջինը՝ Բեռնար Ռեյմոն Շառլ Ջոզեֆ Վանիերը (Bernard Raymond Charles Joseph Vannier) նշանակվել է 2018-ի հունիսին՝ ՏՄՊՊՀ-ի կողմից կատարած համակենտրոնացումից մեկ ամիս առաջ:

ԶՊՄԿ-ի բաժնետեր ընկերության միանձնյա մասնակիցը Շվեյցարիայի քաղաքացի, Ժան Ժակ Լուիս Փոլ Բաֆֆեն է (Jean Jacques Louis Paul Buffet): Մեծ է հավանականությունը, որ ԶՊՄԿ-ի 12,5 տոկոս բաժնեմասի ղեկավարն այնուհանդերձ այս անձը չէ, այլ զուտ իրավաբանական ծառայություն մատուցող եւ ընկերություններ գրանցող անձ է (proxy person): Ժան Ժակ Բաֆֆեն տնօրեն, որոշ դեպքերում նաեւ բաժնետեր է օֆշորային մի շարք ընկերություններում: Նույն իրավիճակն է ընկերության տնօրենի դեպքում: Համացանցում որեւէ տեղեկություն չկա Բաֆֆեի գործունեության մասին, բացի այն, որ փաստաթղթերով նա տարբեր ընկերությունների բաժնետեր կամ տնօրեն է: ՍիվիլՆեթը փոստով հոկտեմբերի 15-ին մի քանի հարցից բաղկացած գրություն էր ուղարկել Ժան Ժակ Բաֆֆին, սակայն մինչ այժմ պատասխան չկա: Ժնեւում ՍիվիլՆեթի գործընկերը եղել է այն հասցեում, որտեղ գրանցված է Ժան Ժակ Բաֆֆեն, նաեւ նկարահանում կատարել տարածքից:

Մեզ հաջողվեց պարզել ԶՊՄԿ բաժնետերերից «Վոլնըրթ ֆայնենս լիմիթեդի» հետ կապված երկու ուշագրավ դրվագ: Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայում այն գրանցված է 77 Strovolos Center հասցեում: Նույն հասցեում է գրանցված մեկ այլ ընկերություն՝ Triendotto Investments Limited-ը: Այս ընկերությանն է պատկանում Ուկրաինայում քաղաքային տրանսպորտի էլեկտրոնային տոմսերի արտադրության բիզնես, որն անհաջողության է մատնվել: Ըստ Կիպրոսի ընկերությունների գրանցման պետական ռեգիստրի՝ Triendotto Investments Limited-ը պատկանում է Կարեն եւ Արմեն Վանեցյաններին: Նրանք Հայաստանի ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի հորեղբոր որդիներն են: Ուկրաինական մամուլն անցյալ տարի սկսեց գրել նաեւ, որ Կարեն եւ Արմեն Վանեցյանների տրանսպորտային այս բիզնեսը տապալվել է, եւ նրանք մեկնել են Շվեյցարիա՝ մշտական բնակության:

Սա միակ զուգադիպությունը չէ Վանեցյաններին պատկանող ընկերության ու ԶՊՄԿ-ի բաժնետերերից մեկի ընդհանրության հարցում: Թե՛ «Վոլնըրթ ֆայնենս լիմիթեդը», թե՛ Triendotto Investments Limited-ը ունեցել են նույն տնօրենները: Trendotto Investments Limited-ն ունի երեք տնօրեն՝ Ժուլիո Պիրես Ֆրեյրե (Julio Pires Freire), Քրիստիանա Մագնիտի (ΧΡΙΣΤΙΑΝΑ ΜΑΓΝΗΤΗ), Կիրիակի Չատցիֆիլիպու (ΚΥΡΙΑΚΗ ΧΑΤΖΗΦΙΛΙΠΠΟΥ) անուններով: Վերջին երկուսը տնօրեն են եղել նաեւ «Վոլնըրթ ֆայնենս լիմիթեդում»:

Վահե Հակոբյանն օգտագործում է իր բաժնեմասը կոմբինատում

Կոմբինատի 12,5 տոկոսի բաժնետերը «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» ՍՊ ընկերությունն է: 2003-ին հիմնված ընկերությունն ուներ երկու բաժնետեր՝50 տոկոս բաժնեմասով՝ Կարեն Գուրգենի Կարապետյանը եւ Վահե Հակոբյանը՝ Մաքսիմ Հակոբյանի որդին: Մաքսիմ եւ Վահե Հակոբյանները մասնավորեցումից ի վեր կառավարչական եւ բաժնետիրական մասնակցություն ունեին Զանգեզուրի պղնձամոլիբդենայինում. 2017-ից Հակոբյանները փայատեր չեն եւ որեւէ մասնակցություն չունեն կոմբինատի

կառավարման գործում:

«Արմենիան մոլիբդեն փրոդաքշնի» կանոնադրությունն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ 2017-ին ընկերությունը բաժնետերերի արտահերթ ժողով է գումարել եւ որոշել վերակազմակերպվել նոր ընկերության՝ «ԱՄՓ հոլդինգ» ՍՊԸ անունով: Վերակազմակերպված ընկերությունը ներկայում համարվում է «Արմենիան մոլիբդեն փրոդաքշնի» իրավահաջորդ:

Եվ ահա «ԱՄՓ հոլդինգի» փաստաթղթերից երեւում է, որ Կարեն Կարապետյանի եւ Վահե Հակոբյանի բաժնեմասերը 2017-ին անցել են «Սթար դասթ» ՓԲԸ-ին: Ընկերության տնօրենը Ավետիք Հովիկյանն է, որը Սյունիքի նախկին մարզպետ, Վահե Հակոբյանին պատկանող «Սուր եւ ասպար» ընկերության տնօրենն է (չշփոթել Մաքսիմ Հակոբյանի որդի Վահե Հակոբյանի հետ): «Սթար դասթի» իրավաբանական հասցեն նույնն է, ինչ կոմբինատի բաժնետերերից «Մուն մեթալսինը»: Մեր ձեռքի տակ եղած փաստաթղթի՝ «Սթար դասթ» ՓԲԸ-ի բաժնետերերը երկուսն են՝ տնօրեն Ավետիք Հովիկյանն ու Ջուլիետա Դարչինյանը: Վերջինիս մասին համացանցում տեղեկություններ գրեթե չկան: Իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստրի համաձայն՝ Դարչինյանի ընտանիքին է պատկանում Երեւանում գրանցված «Արաքս վարսավիրանոց» ՍՊԸ-ն:

Մեր տրամադրության տակ հայտնված տեղեկություններով՝ Դարչինյանը 2012-2014 թվականներին աշխատել է «Ջազզվե»-ում՝ որպես մենեջեր: 2014-2016-ին Դարչինյանը գործավար է եղել «Դիսթրիմէքս»-ում: 2005-2017 թվականներին ընկերության բաժնետերերից է եղել Սուրբ Աթոռում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանը: «Դիսթրիմէքս»-ը զբաղվել է Հայաստան ծխախոտների ներմուծմամբ:

Ըստ բաժնետերերի շղթայի՝ ԶՊՄԿ-ում բաժնեմաս ունեցող Դարչինյանը, փոխարենը, ակտիվ է Ֆեյսբուք սոցիալական ցանցում: Նրա էջը հեղեղված է Միքայել Մինասյանի եւ Մինասյանի մասին դրական հրապարակումներով: Վարսավիրանոցը եւ Ջուլիետա Վարդանյանը գրանցված են Աջափնյակ վարչական շրջանում: Հոկտեմբերի 29-ին Ֆեյսբուք սոցիալական ցանցով պղնձամոլիբդենայինում իր մասնակցության վերաբերյալ մի քանի հարց ուղղեցինք Դարչինյանին: Դրանք մնացին անպատասխան: Ինչպես ներքեւում կտեսնենք, սա միակ դեպքը չէ, երբ ԶՊՄԿ-ում խաչվում են գործարար անցյալ չունեցող ու հանրությանն անհայտ անձինք:

«Ջազզվեի» փոխտնօրենը՝ ֆեռոմոլիբդեն արտահանող

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության շրջանակում կազմված 2016-2017 թթ. ազգային զեկույցից պարզ է դառնում, որ այդ տարիներին ներքին շուկայում ԶՊՄ�կ-ն ֆեռոմոլիբդեն եւ պղնձի հանքաքար է վաճառել մետաղական արդյունահանմամբ զբաղվող տարբեր ընկերությունների: Օրինակ՝ Ախթալայի լեռնա-

հարստացման կոմբինատին 2016-ին վաճառել է 98 միլիոն դրամի պղնձի հանքաքար եւ խտանյութ, իսկ 2017-ին՝ 3,3 միլիարդ դրամի:

2016-ին ԶՊՄԿ-ն «Ջի Առ Ի Փի Սի Օ» ՓԲԸ-ին վաճառել է 1140 տոննա ֆեռոմոլիբդեն: Կոմբինատն արտադրանքն իրացրել է 5,2 միլիարդ դրամով: Հաջորդ տարի ֆեռոմոլիբդենի վաճառքը «Ջի Առ Ի Փի Սի Օ»-ին կտրուկ մեծացել է՝ ԶՊՄԿ-ն այս ընկերությանն է վաճառել 6520 տոննա ֆեռոմոլիբդեն՝ ավելի քան 40 միլիարդ դրամով: Ընկերությունը հիմնվել է 2012-ին Երեւանում եւ կապվում է Վատիկանում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանի շրջապատի հետ, այն հիմնադրել է Սիլվա Ղամբարյանը, որը «Ջազզվե» սրճարանների ցանցի փոխտնօրենն է:

«Ջազզվեի» հիմնադիրը Սերժ Սարգսյանի փեսա, Վատիկանում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանն է, որը 2003-2011 թթ. եղել է «Ջազզվե» ՍՊԸ-ի միանձնյա բաժնետերը, իսկ 2011-ից իր բաժնեմասը փոխանցել է Վիրջինյան կղզիներում գրանցված «Ջազզվե հոլդինգ» ՍՊԸ-ին:

Ղամբարյանը ղեկավարել է «Ջի Առ Ի Փի Սի Օ»-ն 2012-2016 թթ., որից հետո ընկերության տնօ-

րեն է դարձել Դավիթ Ղալթախչյանը, ով «Քրոնիմետի» հայաստանյան ներկայացուցչության ղեկավարներից է: 2018-ից հունիսի 25-ին «Ջի Առ ԻՓ ի Սի Օ»-ի տնօրեն է դարձել Ռոզա Ստեփանյանը:

Ռոզա Ստեփանյանն ընդգրկված է տարբեր բիզնեսներում: Իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստրի համաձայն՝ Ստեփանյանը 2017-2018 թթ. եղել է հայկական գյուղմթերքի խոշորագույն արտահանող ընկերության՝ «Սպայկա»-ի 49 տոկոսի բաժնետերը:

Միքայել Մինասյանի եղբոր՝ Գրիգոր Մինասյանին պատկանող «Էյ էմ» իրավաբանական ընկերությունում, Պետռեգիստրի տվյալներով, Ռոզա Ստեփանյանը տնօրեն է [ԼՐԱՑՈՒՄ - «Էյ Էմ» ընկերության ճշգրտումը]: 2017-2018 թթ. նա տնօրեն է եղել նաեւ «Կովկասֆուդ» ընկերությունում: Այս ընկերությունը Կոտայքի մարզի Ալափարս համայնքում 30 հեկտար տարածքի վրա խնձորենի եւ ընկուզենու մշակմամբ է զբաղվում: Հետագայում «Կովկասֆուդի» բաժնետեր է դարձել «Սպայկան»:

2011-ին Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը Ստեփանյանին ներկայացրեց ՀՀ նախագահին՝ որպես Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի թեկնածու: Ավելի ուշ մամուլում տեղեկություններ տարածվեցին, որ Ռոզա Ստեփանյանի վրա թեկնածությունը կանգ է առել, քանի որ վերջինս Անդրեասյանի հետ աշխատել էր միեւնույն իրավաբանական ընկերությունում՝ «Դիֆենս»-ում: Հրապարակումներից հետո նա ինքնաբացարկ հայտնեց:

ՏՄՊՊՀ-ի 2017-ի մարտի 24-ի 60-Ա որոշմամբ՝ «Ջի Առ Ի Փի Սի Օ»-ն համակենտրոնացել է Դուբայի ազատ տնտեսական գոտում գրանցված «Արեգ գրուպ Դիէմսիսի» ընկերության հետ, որը, ըստ ՏՄՊՊՀ-ի, ձեռք է բերել «Ջի Առ Ի Փի Սի Օ»-ի բաժնետոմսերի 50 տոկոսը: Թե ովքեր են Դուբայում գրանցված ընկերության բաժնետերերը, հնարավոր չեղավ պարզել: Պետռեգիստրից հայտնի դարձավ, որ մյուս 50 տոկոսը պատկանում է Սիլվա Ղամբարյանին:

ՍիվիլՆեթի տրամադրության տակ է հայտնվել փաստաթուղթ, որից երեւում է, թե դեպի ուր եւ ինչ գործընկերների է մետաղական հանքանյութ արտահանել «Ջի Առ Ի Փի Սի Օ» ընկերությունը: Արտահանումները կազմակերպվել են երկու ուղղությամբ՝ դեպի Նիդեռլանդներ եւ Գերմանիա: «Ջի Առ Ի Փի Սի Օ»-ն արտադրանքը վաճառել է, օրինակ, RC Inspection ընկերությանը, որը ստեղծվել է 2006-ին՝ Ռոտերդամում ու զբաղվում է մետաղական հանքանյութերի առեւտրով, նաեւ իրականացնում է տարբեր ծառայությունների մատուցում՝ մետաղական նմուշառման եւ այլ ոլորտներում: Եվրոպայում գործող խոշոր այս ընկերությունը 2018-ից գործունեություն է ծավալում նաեւ Հայաստանում:

Մյուս ընկերությունը, որին մատակարարվել է ֆեռոմոլիբդեն, Euro-Rijn international BV ընկերությունն է: 1979-ին Ռոտերդամում ստեղծված ընկերությունը զբաղվում է լոգիստիկ ծառայությունների մատուցմամբ, ինչպես նաեւ մետաղական ապրանքների տրանսպորտային տեղափոխմամբ, բեռնափոխադրումներով եւ մաքսային ձեւակերպումներով:

Վահե Հակոբյանի «Քրոնիմետ մեթալ թրեյդինգ սի այ էս»-ը

Հայաստանում 2012-ին հիմնվել է «Քրոնիմետ մետալ թրեյդինգ սի այ էս» ՓԲԸ-ն, որի բաժնետերը, սակայն, գերմանական «Քրոնիմետը» չէ: Ըստ իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստրի՝ ընկերության բաժնեմասերի 80 տոկոսը պատկանում է Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանին, 10-ական տոկոս էլ ունեն Մեր Պոլոսկովն ու Նարեկ Ամբարյանը: Պոլոսկովը ներկայում ԶՊՄԿ-ի տնօրենն է, իսկ Ամբարյանը՝ նրա տեղակալը:

Նարեկ Ամբարյանը երկար տարիներ պաշտոններ է զբաղեցրել դատախազական համակարգում, եղել է հատուկ կարեւոր գործերով քննիչ, սակայն 2012-ից լքել է պետական համակարգը: Նարեկ Ամբարյանի եղբայրը՝ զինվորական դատախազի տեղակալ Տիգրան Ամբարյանն է: Ըստ Պետեկամուտների կոմիտեի՝ ընկերությունը գործունեություն է ծավալում տեխնիկական փորձարկումների եւ վերլուծությունների բնագավառում եւ ԶՊՄԿ-ին ծառայություն մատուցող ընկերություններից մեկն է:

«Արմենիան մայնինգ քոնթրաքթոր»

Այս ընկերությունը հանքարդյունաբերության խոշոր հարկատուներից է ու ըստ ՊԵԿ-ի հարկ վճարողների փնտրման համակարգի, զբաղվում է փոխադրման ծառայություններով, գրանցված է Քաջարանում, Գետափնյա 44 հասցեում: Ենթադրաբար՝ «Արմենիան մայնինգ քոնթրաքթորը» եւս կոմբինատին ծառայություն մատուցող ընկերություն է: Բաժնետերը Դուբայում գրանցված «Արեգ գրուպ Դիէմսիսի» ՍՊԸ-ն է, իսկ գլխավոր տնօրենը 2016-ից Օնիկ Ավանեսյանն է, ով եղել է արտակարգ իրավիճակների նախկին նախարար Արմեն Երիցյանի խորհրդականը:

Անպատասխան հարցեր պատասխանատուներին

Այս տարվա հունվարի 29-ին, հուլիսի 28-ին եւ հոկտեմբերի 21-ին ՍիվիլՆեթը հարցումներ էր ուղարկել ԶՊՄԿ՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել վերջին տարիների

ընթացքում կոմբինատի բաժնետերերի ու բաժնեմասերի փոփոխությունների մասին: Մեր հարցումները մնացել են անպատասխան: Ինչպես վերը նշեցինք, փոստով հարցեր էին ուղարկվել նաեւ Ժան Ժակ Լուիս Փոլ Բաֆեին: Սա եւս անպատասխան է մնացել, նույնը՝ «Քրոնիմետի» դեպքում:

Միքայել Մինասյանին Ֆեյսբուքի միջոցով հարցրել էինք ԶՊՄԿ բաժնետեր «Մուն մեթալս» եւ ֆեռոմոլիբդեն արտահանող «Ջի Առ Ի Փի Սի Օ» ընկերություններում իր մասնակցության մասին: Մինասյանը պատասխանել է, որ նշված ընկերությունների հետ որեւէ առնչություն չունի եւ չի ունեցել: Մինասյանը նշում է, որ Շենգավիթ վարչական շրջանում ժամանակին իր սեփականությունը հանդիսացած գրասենյակային տարածքում վարձակալական հիմունքներով բիզնես եւ խորհրդատվական բնույթի գործունեություն են ծավալել մի շարք ընկերություններ, որոնց գործունեության մանրամասներին ինքը չի տիրապետում:

2018-ի նոյեմբերի 20-ին Նիկոլ Փաշինյանն ընդունել էր գերմանական «Քրոնիմետի» ներկայացուցիչներին՝ Գյունտեր Պիլարսկու գլխավորությամբ: Դրանից առաջ էլ իր ասուլիսներից մեկում Նիկոլ Փաշինյանն անդրադառնալով պղնձամոլիբդենայինի սեփականատերերի մասին հարցին՝ ասել էր, որ «կան տարբեր տեղեկություններ, օպերատիվ տվյալներ, այդ ամենը ճշտման պրոցեսի մեջ է, եւ կճշտվի ըստ անհրաժեշտության»: ՍիվիլՆեթը կառավարությանը գրավոր հարցում էր ուղարկել՝ խնդրելով տեղեկացնել, թե արդյոք կառավարությանը հայտնի են դարձել կոմբինատի վերջնական բաժնետերերի մասին տվյալները, եւ արդյոք «Քրոնիմետի» հետ հանդիպմանը քննարկվել ու վարչապետին տեղեկացվել է բաժնեմասերի ու բաժնետերերի վերջին տարիների փոփոխությունների մասին:

Պատասխանելով հարցմանը՝ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունից հայտնել են, որ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության շրջանակներում ապրիլի 23-ին ԱԺ-ում ընդունվել է օրենսդրական փաթեթ, որը սահմանում է մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող կամ իրավունքի ձեռքբերման համար դիմում ներկայացրած կազմակերպության իրական սեփականատերերի գրանցման կարգավորումները:

Նախարարությունից պատասխանել են նաեւ, որ «օրենքները մշակվել են առկա միջազգային լավագույն փորձի հիման վրա», իսկ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բաժնետերերի մասին տեղեկատվության նախարարությունը չի տիրապետում:

Այսպիսով՝ հավաքված տվյալների համաձայն՝ ԶՊՄԿ-ի 75 տոկոս բաժնեմասը պատկանում է գերմանական «Քրոնիմետ» ընկերությունների խմբին: Մաքսիմ Հակոբյանի կողմից նախկինում տնօրինած 12,5 տոկոսն անցել է Միքայել Մինասյանի շրջապատի ներկայացուցիչներին, ապա՝ կիպրոսյան ընկերությունների միջոցով (կիպրոսյան ընկերություններից մեկի հետ նույն հասցեում գրանցված էր Վանեցյանների ընկերությունը) շվեյցարացի Ժան ժակ Բաֆեին, որն ըստ էության իրավաբանական ծառայություններ մատուցող անձ է: Մյուս 12,5 տոկոսը, որ տնօրինում էին Կարեն Կարապետյանն ու Վահե Հակոբյանը՝ Մաքսիմ Հակոբյանի որդին, մի քանի ընկերությունների միջոցով անցել է Ջուլիետտա Դարչինյանին:

Մկրտիչ Կարապետյան
Աղբյուրը՝ civilnet.am

Մեկ տարի առաջ Կապան համայնքի ղեկավար ընտրվեց Գեւորգ Փարսյանը

Պաշտոնավարման տարեդարձի կապակցությամբ «Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Գեւորգ Փարսյանը

էջ 3

ի զետեղարանում տեղադրվեն:

– **Ազդակիր բնակավայր Աճանանում, երկու հարյուր ստորագրությամբ, գյուղացիները պահանջում են փոխհատուցել իրենց հասցրած վնասը:**

Ըստ դրանց՝ ՀՊՄԿ-ն ընդլայնում է պոչամբարի տարածքը՝ քանդելով գյուղացիների վարելահողերը:

Գյուղացիները պահանջել են բոլոր փաստաթղթերը, որոնց ուժով հանրային գերակա շահ է ճանաչված կամ վարձակալությամբ է տրված:

Ի՞նչ ընթացք է ստացել աճանանցիների բողոքը:

– Դա երկար պատմություն է՝ լուրջ պարզաբանում պահանջող: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ձեռք է բերել հող՝ կառուցապատման նպատակով՝ գերակա շահ ճանաչված, որի մի մասը գտնվում էր Աճանան համայնքի տարածքում: Գործընթացը եղել էր մինչ Կապան համայնքի խոշորացումը: Բայց եթե խոսելու ենք մարդկանց փոխհատուցելու խնդիրների մասին, ասեմ, այդ դաշտում շատ հարցեր են քննարկվել եւ ստացել կոնկրետ լուծումներ: Նախ՝ ՀՊՄԿ-ի տնօրինությունը միշտ Աճանանի բնակչությանն օգնելու պատրաստակամություն է հայտնել: Բայց երբեւիցե խոսք չի եղել փոխհատուցման մասին, որովհետեւ փոխհատուցումն այլ բան է ենթադրում, օգնությունն՝ այլ: Փոխհատուցումը նշանակում է մի բան ինչ-որ տեղ այնպես չանես, վնաս տաս, որին պիտի հետեւի փոխհատուցումը: Աճանանի դեպքում խոսք կարող է լինել օգնության, աջակցության մասին: ՀՊՄԿ-ի օժանդակությամբ Աճանան համայնքում կատարվել են գազիֆիկացում, բնակավայրի դպրոցի լոկալ ջեռուցում, ոռոգման ցանցի կառուցում, ճանապարհի բարեկարգում եւ այլն: Կոմբինատի տնօրինությունը պատրաստ է բնակիչների անձնական դիմումների հիման վրա ֆինանսական օգնություն հատկացնել:

– **«Արարատցեմենտ» ՓԲԸ-ն Կապան համայնքում նախատեսում էր կառուցել ցեմենտի աղացման արտադրամաս:**

Օրենքով նախատեսված ընթացակարգով համայնքում պետք է կազմակերպվեին հանրային լսումներ, որոնց կայացումը երկու տարի շարունակ չստացվեց:

Եվ վերջերս պարզ դարձավ, որ «Մուլտի Գրուպ» կոնցեռնի տնօրենների խորհուրդը կասեցրեց Կապանում ցեմենտի արտադրամասի կառուցման գործընթացը:

Ձեր վերաբերմունքը:

– Իմ վերաբերմունքն էլ այդ հարցի առումով բացասական էր մի կարեւոր պատճառով. անհամատեղելի էր օդանավակայանի եւ ցեմենտի արտադրամասի հարեւանությունը: Եթե համայնքը տեսլական ունի զարգացնելու զբոսաշրջությունը, ինչը մեծապես պայմանավորված է օդանավակայանի գործարկմամբ, նման արտադրամասի գոյությունն այդ տարածքում անիմաստ էր: Եթե նպատակ ենք դրել մեր բնությունը ծառայեցնել զբոսաշրջության զարգացմանը, պիտի կասեցվեր ցեմենտի գործարանի կառուցումը:

– **Կապանում վերջին մեկ ամսում ստորագրահավաք էր:**

Մի քանի հազար կապանցի, ըստ մեր ունեցած տեղեկությունների, պահանջում են իրենց նույնպես տալ փոխհատուցման ամենամսյա վճար, ինչպես տրվում է, ասենք, ազդակիր մյուս բնակավայրերի բնակիչներին՝ 40-50 հազար դրամ ամսական:

Ինչպե՞ս եք վերաբերվում քաղաքացիական այդ նախաձեռնությանը:

Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ Դուք հանդիպել եք նախաձեռնության կազմակերպիչներին եւ ընդհանուր հայտարարի չեք եկել:

– Նման հանդիպում եղել է, ուշադիր լսեցի նրանց պահանջները: Նախաձեռնության կազմակերպիչներին հարց ուղղեցի. ինչի՞ց են բխում ձեր պահանջները կամ ինչի՞ն եք դեմ, ո՞րն է ձեր փաստարկը: Ասում են՝ կոմբինատը մեր առողջությանը վնաս է հասցնում, մեր ընդերքն օգտագործում են, այդ ընդերքը մեզ պիտի ծառայի եւ այլն: Բացատրեցի, որ յուրաքանչյուր հիմնախնդիր կարգավորվում է օրենքի սահմաններում, ընդերքը համարվում է պետության սեփականությունը, որ պետությունը փոխանցում է որեւէ կազմակերպության՝ շահագործելու իրավունքով, այս դեպքում տվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին՝ շահագործելու իրավունքով: Սա է ձեւաչափը: Այս դեպքում միայն խոսք կարող է լինել, որ կոմբինատը հնարավորինս քիչ վնաս հասցնի շրջակա միջավայրին:

> *Կարծում եմ, որ վերջին մի տարում չեմ փոխվել, ոչ ապրելաոճս է փոխվել, ոչ էությունս: Միակ բանն այն է, որ առաջ շուտ էի պոռթկում, հիմա ավելի զուսպ եմ դարձել...*

– **Անցած տարում հանրապետության բնապահպանները քանիցս ահազանգ հնչեցրին Կավարտի հանքերի (երբեմնի Լենհանքերի) ազդեցությամբ աղտոտված անձրեւաջրերի հոսքի մասին՝ Կավարտ գետակի հունով, որը լուրջ վտանգ է սպառնում Կապան քաղաքի բնապահպանական վիճակին եւ մարդկանց առողջությանը:**

Իհարկե, դա հին հարց է, ժամանակին չեն հետեւել, որ բաց հանքը ռեկուլտիվացիայի ենթարկվի:

Հիմա այդ ժառանգությունը Ձեզ է բաժին ընկել, ի՞նչ եք մտածում:

– Հիմնախնդրի լուծման մի տարբերակ ենք տեսնում. բաց հանքը ռեկուլտիվացիայի ենթարկել, ինչը սակայն մեծ ծախսեր է պահանջում:

– **Համայնքների խոշորացման մասին տարբեր եւ իրարամերժ կարծիքներ են հնչում:**

Հաճախ այդ մասին խոսում են իրականությունից կտրված գրասենյակային գործիչները:

Կապանն էլ խոշորացված համայնք է, եւ Դուք ամենօրյա աշխատանքով առնչվում եք գյուղերի, գյուղաբնակների հետ, ասել է թե՝ Ձեր դիտարկումն ավելի հիմնավոր կլինի:

Մեր՝ լեռնային պայմաններում, թեկուզ եւ Կապանի օրինակով, խելամի՞տ է տարածաշրջանի բնակավայրերի՝ մեկ համայնքի մեջ միավորված կարգավիճակը:

– Օբյեկտիվորեն ճիշտ եմ համարում համայնքի խոշորացումը, թեպետ այն էլ ասեմ, որ գործընթացը դանդաղ եւ ծանր ընթացավ: Բայց Կապանի օրինակով ճիշտ եմ համարում, քանզի այն գյուղական բնակավայրերը, որոնք չէին կարող ինքնուրույն մի հարց լուծել, հիմա այդ հնարավորությունը կա՝ բյուջետային միջոցների արդյունավետ բաշխվածությունից ելնելով: Նախկինում բալանսային անհավասարակշռություն կար. գյուղական մի համայնք կարող էր ունենալ ֆինանսական լուրջ միջոցներ, նույնիսկ երկմտելով՝ ի՞նչ կարող է անել, իսկ մյուսը կանգնած էր կոտրած տաշտակի առջեւ: Հիմա ֆինանսական միջոցները կենտրոնացվել են, եւ հնարավորություն կա դրանք ճիշտ բաշխել: Նախկինում նման հնարավորության մասին միայն երազել կարելի էր:

– **Համայնքի գյուղերից հատկապես որ-տեղ է, թույլ տվեք ասել, հոգեվարքային վիճակ՝ ժողովրդագրական առումով:**

– Փոքր, մարող գյուղեր կան, օրինակ՝ Աղվանին, Վանեքը, Ձորաստանը, Շրվենանցը, Խդրանցը, Կաղնուտը, Ներքին Խոտանանն էլ սակավ բնակչություն ունի, նույնիսկ Առաջաձորը: Այս բնակավայրերում բնակչությունը ոչ միայն չի ավելանում, այլեւ պակասում է:

– **Էական, սկզբունքային ի՞նչ խնդիրներ լուծվեցին համայնքի գյուղական բնակավայրերում անցած մեկ տարում:**

Գյուղերի զգալի մասում, կարծում ենք, հատկապես մտահոգիչ է ճանապարհների վիճակը:

– Նորաշենիկի տարածաշրջանում ճանապարհը մինչեւ Աղվանի նորոգվել է:

Մի ուրախալի լուր հայտնեմ. Տաթեւից մինչեւ Շրվենանց 12.5 կմ ճանապարհահատված ասֆալտապատվելու է: Նման խնդիր բարձրացրել էի հանրապետական իշխանությունների առջեւ: Մի անգամ չի ասվել, որ այդ ճանապարհը մարզի համար ռազմավարական նշանակություն ունի, նաեւ զբոսաշրջությունը Սյունիքում խթանելու առումով: Հարցը քննարկել ենք ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի հետ, ինչին նա օպերատիվորեն արձագանքեց: Ընդհանուր առմամբ՝ Նորաշենիկի տարածաշրջանում 30.5 կմ գրունտային ճանապարհ ունենք: Ենթադրվում է, որ երկու-երեք տարվա ընթացքում ճանապարհի խնդիրը կլուծվի այդ ենթաշրջանում: Համայնքի գյուղական բնակավայրերում տարբեր գործեր են արվել՝ կապված ջրամատակարարման հետ, ավելի ստույգ՝ խմելու ջրի ներքին ցանցերի նորոգումներ: Երկրորդ՝ գյուղական բնակավայրերի վարչական շենքերի տանիքներն ենք նորոգել:

– **Իսկ կառավարման ձեւը՝ վարչական ղեկավարի միջոցով կառավարումը, որքանո՞վ է արդյունավետ:**

– Վարչական ղեկավարի գոյությունը միանշանակ կարեւոր եմ համարում, քանի որ գյուղաբնակը մեկի միջոցով համայնքապետարան պիտի հասցնի իր խնդիրները: Նա պիտի վստահ լինի, որ իր բնակավայրում կա մի մարդ, ում միջոցով իրեն հուզող խնդիրները կարող է բարձրաձայնել: Յուրաքանչյուր գյուղում կան վարչական ղեկավար եւ օպերատոր, կան գյուղեր, որոնք այլ հաստիքներ՝ գրադարանավար, կոմունալ ծառայությունն իրականացնող աշխատողներ ունեն նաեւ:

> *Կապան համայնքի ավագանին առանձնանում է իր հավասարակշռվածությամբ, անիմաստ բաների հետեւից չի ընկնում: Քաղաքական մոտիվներ չունի, անիմաստ շոու չի կազմակերպում...*

– **Հասցնո՞ւմ եք գյուղերում եւս կատարել մարդկանց ընդունելություն:**

– Գյուղերից համայնքապետարան գալիս են ընդունելության, իսկ ես հիմնականում գյուղական բնակավայրեր այցելում եմ շաբաթ-կիրակի օրերին: Ժամանակացույցս ծանրաբեռնած է, աշխատանքային օրերին Կապանի հիմնախնդիրներով եմ զբաղվում: Համենայնդեպս, Կապան խոշորացված համայնքն ընդգրկում է 37 գյուղական բնակավայր, անցած մեկ տարվա ընթացքում բոլոր բնակավայրերում եղել եմ՝ տեղում ծանոթանալու հիմնախնդիրներին: Նաեւ ավելացնեմ, որ իմ տեղակալներից մեկը միայն գյուղերով է զբաղված, Աստծո ամեն օր լինում է մի գյուղում, այսինքն՝ լիարժեք տիրապետում ենք հրավիճակին: Գյուղացուն հուզող խնդիրներին իրազեկ ենք՝ մանավանդ հրատապ լուծում պահանջող:

– **Կապանյան հանրության մեջ Ձեր բարձր վարկանիշն ակնհայտ է ու անվիճելի:**

Եվ, այդուհանդերձ, ունե՞ք ընդդիմախոսներ, ընդդիմադիրներ, խոչընդոտողներ:

Ի՞նչ ողջամիտ, կառուցողական առաջարկներ եք լսում նրանցից:

– Գիտե՞ք, ընդդիմախոսներ կամ ընդդիմադիրներ նկատում եմ սոցիալական ցանցերում, այն էլ՝ «Ֆեյք» դեմքերով: Ինչպես նախընտրական շրջանում եմ ասել, դրանց վրա ուշադրություն չեմ դարձնում: Եթե մարդը չի ներկայանում, իր դեմքը թաքցնում է, նրանց մասին ի՞նչ պիտի ասեմ: Եթե ողջամիտ, կառուցողական առաջարկներ լինեն, մենք դրանք կքննարկենք, հետեւություններ կանենք: Մի այլ բան էլ եմ նկատել, ով գալիս է համայնքապետարան, ասես, իր պարտքն է համարում գովեստի խոսքեր շռայլել իմ հասցեին: Դա էլ է անընդունելի, դա էլ է մարդուն «փչացնում»: Գոնե լռեն կամ հպանցիկ նշեն այդ մասին: Գովասանքը կարող է երբեմն գլխապտույտ առաջացնել:

– **Ըստ Ձեզ՝ որոնք են Ձեր գործունեության ամենախոցելի տեղերը, բացթողումները, որոնց համար համայնքապետին քննադատելը տեղին ու ճիշտ կլիներ:**

– Այդ մասին ես չէ, որ պիտի ասեմ: Կողքից ավելի լավ է երեւում:

– **Ի դեպ, ժամանակին աղավաղվել են եւ շարունակվում է աղավաղվել մեր քաղաքի ճարտարապետական դեմքը՝ ապօրինի կառուցվող շինությունների, տարատեսակ պատշգամբների տեսքով: Ինչպիսի՞ լուծում կա խնդրին:**

– Ի՞նչ նկատի ունեք ճարտարապետական տեսք ասելով: Եթե խոսքը նոր կառուցվող շինությունների մասին է, հետեւում ենք, որ դրանք քաղաքաշինության նորմերի շրջանակում արվեն: Եթե խոսքն արդեն կառուցվածի մասին է, մենք հնարավորություն չունենք ինչ-որ բան վերակառուցելու: Ինքնակամ պատշգամբները վերակառուցելը կանգնեցվել է, այլեւս չի թույլատրվում, միայն կցակառույցներն են թույլատրվում, այն էլ քաղաքաշինական նորմերի շրջանակում: Կցակառույցների անհրաժեշտությունն էլ առաջանում է, քանի որ բնակելի շենքեր չեն կառուցվում: Ինչ վերաբերում է տաղավարներին, խորդանոցներին, ցանկապատներին, մյուս տարվանից դրանք բոլորը մաքրելու ենք: Մեր համայնքը պիտի ունենա պատշաճ տեսք:

– **Մեկ տարվա մեջ, անշուշտ, հասցրել եք բախվել տեղական ինքնակառավարման մարմինների մասին գործող օրենսդրության եւ դրական, եւ բացասական կողմերին:**

Ի՞նչն է, ըստ Ձեզ, խոչընդոտում տեղական ինքնակառավարման մարմիններին՝

իր լիազորություններն առավել արդյունավետ իրականացնելու ճանապարհին:

– Համայնքի ղեկավարն ունի երկու լիազորություն՝ պարտադիր եւ պատվիրակված: Կան ոլորտներ, որոնք ՏԻՄ օրենքում ընդհանրական են ներկայացված: Ասենք, բնապահպանական ոլորտում համայնքի ղեկավարի լիազորությունները ընդհանրական են ձեւակերպված: Դա ավելի շատ կոնկրետացնել է պետք, խնդիրը վերաբերում է մյուս ոլորտներին եւս՝ առողջապահությանը, կրթությանը, հասարակական կարգի պահպանմանը եւ այլն:

– **Հիմա Ազգային ժողովում քննվում է «Տարածքային կառավարման մասին» օրենքի նախագիծը:**

Ըստ երեւույթին կորոշակիացվեն մարզպետարանների լիազորությունները, ինչ-որ չափով անդրադարձ կլինի տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներին:

Ի՞նչ լրացումներ կուզենայիք տեսնել այդ օրենքում՝ ՏԻՄ-երին առնչվող:

Համայնքապետների կարծիքը հաշվի՞ են առել այդ օրինագիծը մշակելիս:

– Ասեմ, որ օրենքի նախագիծն ուղարկել են, ուսումնասիրել եմ, լուրջ խնդիրներ չեմ նկատել: Այնուամենայնիվ, մի բան նշեմ. եթե օրենքի նախկին տարբերակում ասվում էր մարզպետարանը մեթոդական եւ իրավական հսկողություն է իրականացնում, հիմա կարծես իրավական հսկողությունը վերապահել են տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը: Ամեն դեպքում բոլոր օղակների լիազորությունները պիտի սահմանազատվեն՝ սա կլինի օրենքի բերած թարմությունը:

– **Ավագանի եւ համայնքապետ հարաբերությունների մասին:**

Ընդհանուր առմամբ, մարզի մասշտաբով, կարող ենք ստույգ ասել, այդ ինստիտուտը դժվարությամբ է կայանում կամ չի կայանում կամ ձեւականության շղարշով է պատված:

Ինչո՞վ է առանձնապես աչքի ընկնում Կապանի ավագանին:

– Կապան համայնքի ավագանին առանձնանում է իր հավասարակշռվածությամբ, անիմաստ բաների հետեւից չի ընկնում: Քաղաքական մոտիվներ չունի, անիմաստ շոու չի կազմակերպում: Կապանում իրականում ունենք իրավիճակը սթափ գնահատող ավագանի, եւ ամենակարեւորը՝ ավագանու անդամների մեջ նկատում եմ սրտացավություն համայնքային խնդիրների նկատմամբ: Ցանկացած հարցի դեպքում պատրաստակամություն են հայտնում ինչ-որ ձեւով մասնակցել խնդիրների լուծմանը: Սա շատ կարեւոր հանգամանք է:

– **Մարզպետարան-համայնքապետարան հարաբերությունները:**

Այդ հարցն էլ տարբեր կերպ է մեկնաբանվում, տարբեր կերպ ընկալվում մարզի համայնքներում:

Ի՞նչ կասեք այդ առումով:

– Գործնական, աշխատանքային, նորմալ հարաբերություններ են: Ես ոչ մեկի հետ կոնֆլիկտ չունեմ: Ոչ էլ այդ դաշտում խոչընդոտների եմ հանդիպում: Համայնքին առնչվող ինչ հարց բարձրացրել եմ, մարզպետ Հունան Պողոսյանն արագ արձագանքել է:

«Տարածքային կառավարման մասին» օրենքն ընդունելուց հետո, կարծում եմ, ավելի կհստակեցվեն այդ հարաբերությունները:

– **Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ պետք է օտարերկրացի ներդնողը գա Կապան, ինչո՞վ կարող է գրավիչ լինել Կապանը ներդնողի համար: Որպես համայնքապետ, ի՞նչ ուղերձ կհղեք ներդնողներին:**

– Կապանը տնտեսապես ակտիվ քաղաք է, այստեղ ներդրում կատարելը կարդարացվի, այստեղ կան խոշոր հանքարդյունաբերողներ, որից բխում է տնտեսական ակտիվությունը: Համայնքային իշխանությունը միայն կխրախուսի ներդնողներին, նրանց համար խնդիրներ չեն ծագի, հնարավորինս կաջակցենք: Բիզնեսի առումով էլ շահավետ կլինեն այդ ներդնումները: Օրինակ, Կապանում բնակարանային ֆոնդի պահանջարկ կա, նույնիսկ Շահումյան փողոցում իրականացվող բազմաբնակարան շենքերի շինարարությունը քիչ եմ համարում, իրականում Կապանում բնակարանի պահանջարկ կա: Կասեմ, որ բնակարանային ոլորտում ներդրումները Կապանում արդարացված են: Ըստ իս՝ եւ օդանավակայանի վերագործարկումը, եւ Աղվանի-Տաթեւ ճանապարհի ասֆալտապատումը բարերար ազդեցություն կունենան այստեղ ներդնողներ հրավիրելու առումով:

– **Վերջին ժամանակաշրջանում, կարծեք, ոչինչ չի ասվում Կապանի քույր քաղաքների մասին, որոնց թիվը, որքանով տեղյակ ենք, յոթի է հասնում՝ Չինաստանի Նինգպո, ԱՄՆ-ի Գլենդել, Բելառուսի Բորիսով...**

Այդ քաղաքների հետ համագործակցությունը շարունակվո՞ւմ է, թե՞...

– Առայժմ թույլ է համագործակցությունը քույր քաղաքների հետ: Պաշտոնավարման այս մի տարվա ընթացքում քույր քաղաք Բելառուսի Բորիսովում տոնակատարություն էր, որին Կապանի պատվիրակությունը մասնակցեց՝ մեր բարեմաղթանքներով եւ շնորհավորանքներով: ԱՄՆ-ի Գլենդել քաղաքի հետ կապն ընդհատվել է տարիներ առաջ, պատճառներն ինձ հայտնի չեն, բայց ես պատրաստվում եմ այդ կապը վերականգնել:

– **Սոցիալական ոլորտին առնչվող հարցեր:**

Հատկապես ի՞նչ են ուզում քաղաքացիները համայնքապետից, համայնքապետարանից, երբ գալիս են ընդունելության:

– Փող եւ աշխատանք...

– **Ունե՞ք բնակչության զբաղվածության թվային պատկերը:**

Վարչապետը մի քանի օր առաջ հայտարարեց, թե Հայաստանում գործազրկության միջին ցուցանիշը 17.7 տոկոս է:

Իսկ Կապանո՞ւմ...

– Կապանում գործազրկության մակարդակը տատանվում է 10-15 տոկոսի սահմաններում: Կապանում ոչ թե աշխատատեղերի խնդիր կա, այլ պահանջված աշխատատեղերի խնդիր: Կան պահանջվող աշխատատեղեր, որոնց հանդեպ հետաքրքրություն չկա: Հանրապետության վարչապետն էլ Սիսիանում այդ երեւույթի մասին բարձրաձայնեց:

– **Անցած մեկ տարում որքա՞ն աշխատատեղ է ստեղծվել Կապանում եւ որտե՞ղ:**

– Նոր աշխատատեղերի առումով կնշեի «Տաշիր-պիցցայի» մուտքը մեր քաղաք, որ եղել է մեր հրավերով եւ աշխատատեղեր է ապահովել:

– **Համայնքային բյուջեի մուտքային մասը 2018-ին, 2019-ին: Եվ կանխատեսումը 2020-ին:**

– Կապան համայնքի 2019 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի փաստացի եկամուտները կազմել են 1.560.288.3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 87.0 տոկոս:

Այսպիսի մի համեմատություն. այս տարվա երրորդ եռամսյակի արդյունքում եկամուտների հավաքումը 26 տոկոսով գերազանցում է 2018 թվականի նույն ժամանակաշրջանի հավաքման մակարդակը:

– **Անշարժ գույքի շուկայի վիճակը. ի՞նչ պատկեր կամ փոփոխությունների ի՞նչ միտում ունի անշարժ գույքի շուկան մարզկենտրոնում եւ համայնքի գյուղական բնակավայրերում:**

– Անշարժ գույքի շուկայում գների աճ է գրանցվել, այսօր, օրինակ, շատ դժվար է Կապանում բնակարան գտնելը: Եթե գտնես էլ, բնակարանային վարձը շատ բարձր է, կարող է մեկ սենյականոց բնակարանը 60 հազար դրամ արժենալ: Երկու սենյականոց նորոգված բնակարանը Կապանի կենտրոնական հատվածում գնահատվում է 30-35 հազար դոլար:

– **Մշակութային ոլորտում աշխուժությունն ակնհայտ է:**

Կարծում ենք՝ մշակույթի կենտրոնի վերակառուցման ավարտից հետո մի նոր աստիճանի կբարձրացվի մարզկենտրոնի մշակութային կյանքը:

Ե՞րբ կավարտվի մշակույթի կենտրոնի վերակառուցումը:

– Այժմ մշակույթի կենտրոնի ճակատային մասի երեսպատման աշխատանքներ են ընթանում, որոնք ակնկալում ենք ավարտել մինչեւ տարեվերջ: Բայց դրանով նորոգումները չեն ավարտվում, այնուհետեւ շինարարները ձեռնամուխ են լինելու վարչական սենյակների ներքին հարդարման աշխատանքներին:

– **«Կապան-Գանձասար» ֆուտբոլային թիմի ճակատագրին երկու անգամ անդրադարձավ վարչապետը՝ սյունիքյան այցերի ժամանակ:**

Եվ, որքան էլ տարօրինակ է, ոչ մի արդյունք:

Գոնե ուշացումով խնդրի լուծման հեռանկար տեսնո՞ւմ եք, թե՞...

– Դժվար եւ ցավոտ հարց բարձրացրեցիք, ըստ իս՝ խնդրի լուծումը պիտի տա «Գանձասար-Կապան» ակումբը:

– **Ինչպե՞ս եք գնահատում համայնքի նախակրթարանների վիճակը, ի՞նչ խնդիրներ եք տեսնում այդ ոլորտում, նախադպրոցական տարիքի երեխաների ո՞ր մասն է ընդգրկված մանկապարտեզներում:**

– Այդ հարցին լուրջ ուշադրություն ենք դարձնում: Մոտ ապագայում խնդիրը լուծված կհամարենք, քանի որ շարունակվում են եւ ավարտին կհասցվեն Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի «Դ» մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները: Վերակառուցվող մասնաշենքը նախատեսված է մանկապարտեզի համար: Իսկ ընդհանրապես վերջին մեկ տարում համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում կատարվել են նորոգման աշխատանքներ, ձեռք բերվել գույք, ինչպես խոհանոցային, այնպես էլ՝ մարզական:

– **Պաշտոնավարումից մեկ տարի անց, երբ արդեն հանգամանալից ծանոթ եք համայնքի եւ թույլ, եւ ուժեղ կողմերին, եւ հնարավորություններին ու ներուժին, որո՞նք են, ըստ Ձեզ, համայնքի առջեւ ծառացած ամենալուրջ խնդիրները կամ գլխավոր մարտահրավերները:**

– Ամենացավոտ խնդիրը, նորից կրկնեմ, խոշորացված Կապան համայնքի համար դատարկվող գյուղերն են: Մեր աչքի առաջ գյուղական բնակավայրերն ամայանում են, եւ ցավալին այն է, որ գյուղերը վերաբնակեցնելու լուծում չեմ տեսնում: Չեմ ուզում անիրական կանխատեսումներ անել: Կապան քաղաքում լուրջ խնդիր են կոյուղագծերը, որոնք տասնամյակների վաղեմություն ունեն՝ դրանով պայմանավորված պերմանենտ վթարներով: Ճիշտ է, դրանք մեր հաշվեկշռում չեն, «Վեոլիա-ջուր» ընկերությանն են պատկանում, բայց դրանց խցանումները, անընդհատ վթարները խնդիրներ են ստեղծում քաղաքային տնտեսության համար: Նույն այդ քաղաքային տնտեսության հիմնախնդիրները լիովի բավարարում են:

– **Մեկ տարի առաջ փոխվեց նաեւ համայնքի գլխավոր գործատուի՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատի սեփականատերը:**

«Չարատ Կապան» ՓԲԸ-ի հետ համագործակցությունը, համայնքային խնդիրների լուծմանն այդ ընկերության մասնակցությունը:

– Համագործակցությունը կառուցողական եմ համարում: Մեր կողմից բարձրացված խնդիրներին ընկերության ղեկավարությունն աջակցելու, օգնելու պատրաստակամություն է հայտնում: Ըստ իս՝ մեր համագործակցությունը ստացվում է, դժգոհելու կամ առավել եւս՝ նեղանալու պատճառ չկա:

– **Հանրապետության կառավարությունը, որքանով տեսնում ենք, ուշադրության կենտրոնում է պահում Կապանի օդակայանի վերագործարկման հարցը:**

Ժամկետները քանիցս փոխվեցին:

Ե՞րբ են, ի վերջո, նախատեսվում վերակառուցման ավարտը եւ վերագործարկումը:

Եվ ինչո՞ւ Սյունիքի օդակայան եւ ոչ Կապանի օդակայան, չէ՞ որ Սիսիանն ու Գորիսն էլ ունեն իրենց օդակայանները:

– Օդակայանը գարնանն է վերագործարկվելու: Ինչ վերաբերում է Սյունիքի օդակայան եւ ոչ Կապանի օդակայան անվանումին, ես դա էական հարց չեմ համարում: Փաստորեն, Սյունիքում նման մասշտաբի մի օդակայան է լինելու, որից էլ հավանաբար բխում է անվանումը:

– **Անցած մեկ տարում ունեցե՞լ եք հիասթափության, նահանջի պահեր:**

– Էությամբ նահանջող տեսակ չեմ, չեմ հիշում, որ այս վերջին տարում հիասթափության պահեր եմ ունեցել:

– **Ո՞ւմ հետ եք խորհրդակցում, մտքեր փոխանակում, երբ հայտնվում եք ոչ սովորական իրավիճակներում, չնախատեսված հարցերին դեմ հանդիման:**

– Նման առիթներ քիչ են լինում: Բայց եթե նման հարց է ծագում, ընտանիքում խորհրդակցում եմ տղամարդկանց՝ եղբորս եւ հորս հետ:

– **Եվ, իհարկե, գլխավոր դասերը, եզրահանգումները մեկ տարվա պաշտոնավարման արդյունքում:**

– Կարծում եմ, որ վերջին մի տարում չեմ փոխվել, ոչ ապրելաոճս է փոխվել, ոչ էությունս: Միակ բանն՝ այն է, որ առաջ շուտ էի պոռթկում, հիմա ավելի զուսպ եմ դարձել: Ինչ վերաբերում է ստացած դասերին՝ այն ստացել եմ իմ ընտանիքում. վաղ տարիքում էի, երբ հայրս պատվիրան տվեց՝ ինչքան կարողանում ես, մարդկանց լավություն արա: Այդ դասն ինձ համար այժմեական է մինչեւ հիմա, որով առաջնորդվում եմ...

– **Մի քիչ էլ՝ Ձեր անձնականի մասին:**

Վերջերս արու զավակ եք ունեցել, շնորհավորում ենք:

– Շնորհակալ եմ: Այս մի վերջին տարում իմ կյանքում ամենաականառու իրադարձությունն արու զավակիս ծնունդն էր, բայց զբաղվածությունս այնքան մեծ է, որ ընտանիքին շատ քիչ ուշադրություն եւ ժամանակ եմ հատկացնում, բայց չեմ պատրաստվում այդպես շարունակել:

Զրույցը՝ Սամվել Ալեքսանյանի եւ Վահրամ Օրբելյանի

Նախակրթարանը փոնեց 50-ամյա հոբելյանը

Կապանի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատությունը (ՆՈՒՀ) հոկտեմբերի 25-ին փոնեց հիմնադրման կես դարը: Միջոցառմանը մասնակցում էին Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը, մարզպետարանի եւ համայնքապետարանի ներկայացուցիչներ, մարզկենտրոնի տարբեր ՆՈՒՀ-երի տնօրեններ, կրթօջախի նախկին աշխատակիցներ, ծնողներ եւ հյուրեր:

«Շնորհավոր հոբելյանդ, սիրելի մանկապարտեզ» մաղթանքն էր աչքի զարնում, երբ մտանք նախակրթարանի՝ տոնականորեն զարդարված դահլիճ: Մանկապարտեզի սաները դաստիարակչուհիների հետ մեկտեղ ներկայացրին գրական-երաժշտական համադրույթ՝ ժպիտ ու հրճվանք պարգեւելով ներկաներին:

Նախակրթարանի տնօրեն Բելլա Կոստանյանը, ով հաստատությունը ղեկավարում է երկու տասնամյակ, փաստերի լեզվով ներկայացրեց կրթօջախի անցած ուղին՝ մասնավորապես նշելով, որ հաստատությունը 50 տարում միայն երկու տնօրեն է ունեցել՝ Իրմա Մկրտչյանը եւ ինքը: *«Պատրաստվելով մանկապարտեզի հոբելյանը նշելուն՝ ուսումնասիրել ենք արխիվային նյութեր ու լուսանկարներ, վերաարժեւորել անցած-գնացած օրերը, մտաբերել աշխատակիցների հետ կապված հիշարժան, նաեւ զավեշտալի դեպքեր, արտահայտություններ, հիշել աշխատակիցներին ու սաներին, ինչը հսկայական նյութ տվեց հոբելյանական ծրագիրը կազմելու համար»,* – ներկայացրեց տնօրենը՝ հավելելով, որ տասնամյակներով կուտակած փորձի շնորհիվ հաջողվել է ստեղծել համերաշխ կոլեկտիվ, ովքեր հաջողությամբ առաջ են տանում մանուկների կրթության եւ դաստիարակության գործը:

Մանկապարտեզի հիմնադիր տնօրեն Իրմա Մկրտչյանը նշեց, որ բուհն ավարտելուց հետո իրեն գործուղեցին Կապան, ժողկրթբաժնում հինգ տարի մեթոդիստ աշխատելուց հետո զգաց, որ դա իր կոչումը չէ, եւ ստանձնեց «Քաջարանշին» տրեստի ենթակայության ներքո գտնվող մանկապարտեզի ղեկավարությունը: Բանախոսը ներկայացրեց նորաստեղծ հաստատության առաջին դժվարությունները՝ «Չգիտեինք՝ ինչից սկսել», բայց, նախակրթարանի աշխատակիցների նվիրումի շնորհիվ, մանկապարտեզը դարձավ առաջավոր փորձի փոխանակման օջախ, լավագույններից մեկը՝ Կապանում:

Հոբելյանական հանդիսության ժամանակ հրապարակվեցին մանկապարտեզի՝ արտերկրում բնակվող նախկին աշխատակիցների՝ Սեդա Ծատրյանի (Բելգիա), Շողեր Քարամյանի (ԱՄՆ) շնորհավորական ուղերձները:

Իրենց խոսքում նախակրթարանի կոլեկտիվին բարեմաղթանքներ հղեցին մանկապարտեզի նախկին սան Շողեր Քարամյանը, նախակրթարանի ծնողխորհրդի նախագահ Լիանա Մելքումյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Սիդա Արզումանյանը, Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության առաջատար մասնագետ Նելլի Կարապետյանը, Գրետա Սարգսյանը, ում մայրը մանկապարտեզի երկարամյա խոհարարն է եղել, Ռուզան Հակոբյանը, ուրիշներ:

Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը, շնորհավորելով մանկավարժներին հոբելյանի առթիվ, մատաղ սերնդի կրթության գործում ունեցած նշանակալի ավանդի համար համայնքապետարանի շնորհակալագրեր եւ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից թողարկված անվանական հուշադրամներ հանձնեց Բելլա Կոստանյանին, Իրմա Մկրտչյանին, մանկապարտեզի հիմնադիր աշխատակիցներ Վերժինե Վարդանյանին, Ռայա Սարգսյանին, Ժենյա Արզումանյանին:

Հոբելյանական միջոցառումը շարունակվեց աղանդերի սեղանի շուրջ՝ բարեմաղթանքներ հնչեցնելով եւ հուշեր ներկայացնելով:

Վահրամ Օրբելյան

Նախակրթարանի 50-ամյա հոբելյանը. «ուշացած» խոստովանություն

Ժամանակն իր պտույտներով մեզ մոտեցրել է մի հաճելի հոբելյանի՝ թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատության (նախկինում «Քաջարանշին» տրեստի մանկապարտեզ) 50-ամյա տարեդարձին:

1969-ին Կապանա տան կրթության քարտեզի վրա մի օջախ էլ ավելացավ, մանուկների դաստիարակության մի նախակրթարան, որտեղ նախատեսված 140-ի փոխարեն ավելի քան 200 երեխա էր հաճախում՝ հայ, ռուս, ադրբեջանցի:

Առաջավոր փորձի մանկապարտեզ էր, որտեղ ստեղծվել էր համերաշխ մի կոլեկտիվ՝ համալրված նախակրթության գործին գիտակ մասնագետներով:

Կոլեկտիվի աշխատանքը բազմիցս խրախուսվել է տեղական իշխանությունների, կրթության եւ լուսավորության, ինչպես նաեւ արդյունաբերական եւ շինարարության մինիստրությունների կողմից: Ուրախալի է, որ մինչեւ հիմա շարունակվում են լավագույն ավանդույթները:

Հոբելյանի այս օրը նաեւ հուշերի գիրկն ընկնելու մի պատեհ առիթ է, վերհիշելու եւ արժեւորելու կրթարանի անցած ուղին:

Ուզում եմ պատմել մի ոչ ուրախ միջադեպի մասին: 1975 թվականին էր, ինձ շտապ կանչեցին կուսակցության Ղափանի շրջանային կոմիտե՝ երրորդ քարտուղարի մոտ: Երբ տեղ հասա, վերջինս մռայլ դեմքով մի նամակ մեկնեց ինձ: Ծրարի վրա բազմաթիվ մակագրություններ կային, նամակը հասցեագրված էր Խորհրդային Միության՝ այն ժամանակվա Մինիստրների խորհրդի նախագահ Կոսիգինին: Դիմողը մի ադրբեջանուհի էր՝ Խանում անունով, ով նամակով խնդրում էր պատժել Ղափանի «Քաջարանշին» տրեստի մանկապարտեզի կոլեկտիվին: Մանկապարտեզ հաճախող իր դստերն իբր վատ են խնամում, պատճառաբանում էր, թե իբր վատ խնամքի պատճառով իր աղջկա ոտքերը ծուռ են: Մինչդեռ մասնագետ էինք հրավիրել, ով բուժզննման էր ենթարկել աղջկան եւ ախտորոշել «ռախիտ» հիվանդություն:

Բայց տիկինն անդրդվելի էր ու անսասան, շարունակում էր պայքարել: Կոլեկտիվն ահ ու սարսափի մեջ էր. սպասում էինք ամպրոպի: Ի վերջո վերադասից կարգադրություն եկավ. իրենց պարտականությունները վատ կատարելու եւ ազգային փոքրամասնությունների հանդեպ անբարյացակամ եւ անհոգի վերաբերմունքի համար մսուրի աշխատակիցներ՝ բուժքույրեր Ժ.Արզումանյանին, Է.Ծատրյանին, դայակ Ա.Սարգսյանին հայտարարել խիստ նկատողություն:

Նկատողության տեքստը փակցվեց մանկապարտեզի միջանցքում՝ տեսանելի տեղում, որ Խանումը կարդա պատժվածների անունները եւ ի վերջո հանգստանա: Իսկ մենք խորապես համոզված էինք, որ նկատողությունն անհիմն է, բայց ի՞նչ կարող էինք անել: Հիմա, երբ այդ չարաբաստիկ օրվանից անցել է 43 տարի, ես մեղավոր եմ զգում իմ անմեղ եւ լավագույն աշխատակիցների հանդեպ եւ ուշացումով ներողություն եմ խնդրում նրանցից:

Ինչեւէ, այսօր հոբելյանի օր է, ուստի հարմար առիթ արժանին մատուցելու թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատության ողջ անձնակազմին՝ տնօրեն Բելլա Կոստանյանի գլխավորությամբ, նրանց մաղթել ամուր առողջություն եւ արեւշատություն, նոր հաջողություններ մանուկների դաստիարակության անչափ կարեւոր գործում:

Միշտ շարքում լինեք, իմ պաշտելի կրտսեր գործընկերներ, հաջողությամբ ուղեկցեք ձեր սաներին հեքիաթների զարմանահրաշ աշխարհում:

Աստված ձեզ պահապան:

Իրմա Մկրտչյան
«Քաջարանշին» տրեստի մանկապարտեզի նախկին տնօրեն (այժմ՝ թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն)

«Դավիթ բեկ» կազմակերպության աջակցությամբ դպրոցականները կհաղորդակցվեն բարձրագույն տեխնոլոգիաներին

Շուտով «Հայաստանի Հանրապետությունում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ներդնում» ծրագրի շրջանակում Կապանի թիվ 13 հիմնական դպրոցում կգործի «Արմաթ» ինժեներական լաբորատորիա: Նախաձեռնությունը «Դավիթ բեկ» տարածաշրջանային հասարակական կազմակերպությանն է (նախագահ՝ Գագիկ Մելքումյան), որն իրականություն դարձավ Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (գործադիր տնօրեն՝ Կարեն Վարդանյան) շնորհիվ: Սա թվով վեցերորդ լաբորատորիան է մարզկենտրոն Կապանում:

Սեպտեմբերի 12-ին դպրոցում տեղադրվեցին լաբորատորիայի սարքավորումները՝ եռաչափ տպիչ, շաղափային եւ լազերային հաստոց, եռաչափ մոդելավորումն ապահովող ռոբոտ-կոնստրուկտոր: Եռաչափ տպիչը, օրինակ, թույլ է տալիս պատրաստել ցանկացած տեսակի եւ ոճի եռաչափ մոդելներ: Բացի այդ կարող են ստեղծվել եւ տպվել կաղապարներ ու պատյաններ մինի համակարգիչների համար, ինչպես նաեւ առօրյայում օգտագործվող այլ սարքեր եւ իրեր:

Լաբորատորիան տեղադրելուց հետո «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ներդրման ծրագրի ղեկավար Սեդրակ Վարդանյանը հանդիպում ունեցավ կրթօջախի 5-9-

րդ դասարանների աշակերտների հետ, ներկայացրեց ինժեներական լաբորատորիայի գործունեության հիմունքները, նպատակներն ու խնդիրները, հետաքրքրվեց աշակերտների նախասիրություններով, նրանց նախընտրած մասնագիտություններով, մանրամասնեց բարձր տեխնոլոգիաների դերը յուրաքանչյուր մասնագիտությամբ աշխատելու դեպքում:

– *Ինչ մասնագետ էլ դառնաք՝ շինարար, տնտեսագետ, հաշվապահ, իրավաբան, բժիշկ, էլ չխոսելով ծրագրավորող ինժեների մասին, ձեզ անհրաժեշտ են լինելու եւ ինժեներական, եւ ծրագրավորման հմտություններ, եւ մոդելավորման որոշակի կարողություններ, ինչը գումարվելով նախընտրած մասնագիտությանը, ձեզ ամենապահանջված մասնագետը կդարձնի: Մի խոսքով, այս լաբորատորիան ձեզ մասնագիտական կողմնորոշման մեծ հնարավորություն է ընձեռում,* – դիմելով դպրոցականներին՝ ասաց Սեդրակ Վարդանյանը՝ տեղեկացնելով նաեւ, որ շնորհիվ ինժեներական լաբորատորիայի՝ 15, 16-ամյա դպրոցականներ կան, մասնագիտություն են ձեռք բերել եւ գումար են վաստակում:

Կրթօջախի տնօրեն Զավեն Ստեփանյանը դպրոցի տնօրինության եւ աշակերտության անունից շնորհակալություն հայտնեց Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությանը, «Դավիթ բեկ» տարածաշրջանային հասարակական կազմակերպությանը՝ ինժեներական լաբորատորիաների ներդրման ծրագիրն իրենց դպրոցում սկզբնավորելու համար: Նա նաեւ համոզմունք հայտնեց, որ կրթօջախի դպրոցականները ձեռք կբերեն հմտություններ եւ կարողություններ, կյուրացնեն նոր գիտելիքներ, ինչը հնարավորություն կտա ավելի արագ տիրապետել առաջատար տեխնոլոգիաներին եւ ի վերջո՝ ավանդ ներդնել մեր երկրի պաշտպանունակության ամրապնդման գործում:

Վահրամ Օրբելյան

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am www.facebook.com/SyuniacYerkirNewspaper/

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 05.11.2019թ.:

QR ԿՈԴ